

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



EUROPEAN
EDUCATIONAL REGIONAL
ACADEMY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1

ԵՐԵՎԱՆ
2011



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1 (01)

ԵՐԵՎԱՆ
2011

ՀՏԳ- 001
ԳՄԴ- 72
Ե 744

Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել
Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ:

Գլխավոր խմբագիր

Բիչախչյան Ս. Ա., փիլ. գիտ. թեկնածու, ԵԱ պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ

Արրահամյան Հ. Մ., պատմագիտության դոկտոր
Աստվածատրյան Ա. Վ., բժշկական գիտ. դոկտոր
Բաղիրյան Գ. Մ., իրավագիտության դոկտոր
Գրիգորյան Յու. Գ., ֆիզմաթ գիտ. դոկտոր
Խաչատրյան Հ. Ե., տնտեսագիտության դոկտոր
Հովհաննիսյան Դ. Ն., կենսաբանական գիտ. դոկտոր
Ղարսյան Է.Վ., տեխնիկական գիտ. դոկտոր
Մովսիսյան Յու. Մ., ֆիզմաթ գիտ. դոկտոր
Վահանյան Գ. Ա., տնտեսագիտության դոկտոր
Քրիստոֆ Կրեյտց, ինֆորմատիկայի դոկտոր

Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժող./
Ե 744 ԵՏԱ, Գլխ. խմբ.՝ Ս. Բիչախչյան. - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2011:
Գիրք 1(01). - 226 էջ:

Ժողովածուն ընդգրկում է իրավաբանության, տնտեսագիտության, կառավարման, տնտեսագիտա-մաթեմատիկական մոդելների, ինֆորմատիկայի և զբոսաշրջության տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИА: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF THE SCIENTIFIC ARTICLES

ՀՏԳ- 001
ԳՄԴ- 72

ISBN 978 - 99941 - 2 - 609 - 5

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2011
© Publishing of European Educational Regional Academy, 2011

**ՍՈՒԲՍԻԴԱՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կ.Ս. ԲԱՏԻԿՅԱՆ

Սուբսիդար մեղադրողի ինստիտուտը նորություն է հայրենական իրավագիտության պատմության մեջ: Ինչպես Խորհրդային, այնպես էլ հետխորհրդային ժամանակահատվածում քրեական դատավարական օրենսդրությունը հանցագործությունից տուժած անձին, դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում, մեղադրանքը պաշտպանելու լիազորությամբ չի օժտել:

Իրավագիտության զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ հանցագործության դեմ արդյունավետ պայքարը հնարավոր չէ պատկերացնել՝ առանց հասարակության անդամների ներգրավման և վերջիններիս գործուն օժանդակության:

Հայտնի է մասնավոր անձանց քրեական հետապնդման մեջ ներգրավելու երկու հիմնական եղանակ՝ հանցավոր արարքի հետևանքով վնաս կրած անձի կողմից հանցագործության կատարման մեջ ինչ-որ մեկին հրապարակայնորեն մեղադրելը և հանցագործության կատարման վերաբերյալ պետական իրավասու մարմիններին քաղաքացիների կողմից տեղեկություններ տրամադրելը: Նշված եղանակներով բացահայտվում են հանրորեն վտանգավոր արարքների վերաբերյալ տեղեկությունները, որից հետո պետական իրավասու մարմինները ձեռնամուխ են լինում հանցավոր արարք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու գործընթացին, որի ընթացքում շատ հաճախ մոռացվում կամ անտարբերության է մատնվում հանցագործության հետևանքով վնաս կրած անձանց շահերի պաշտպանությունը:

ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված են արդարադատության իրականացման ժողովրդավարական հիմնական ըսկզբունքները, անձի իրավունքների և օրինական շահերի

պաշտպանությունն ապահովող երաշխիքները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք [1]:

Սահմանադրական այս սկզբունքն իր արտահայտությունն է ստացել ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում, որի 6-րդ հոդվածի 17-րդ կետը պարզաբանում է «քրեական հետապնդում» հասկացությունը, որի համաձայն՝ քրեական հետապնդումն այն բոլոր դատավարական գործողություններն են, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը, նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չըթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի միջոցներ կիրառելը [2]:

Հայաստանի Հանրապետությունում իրականացված դատաիրավական բարեփոխումների արդյունքում, արդարադատության իրականացման ժողովրդավարական հիմնական սկզբունքների հետ միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ամրագրվեցին նաև անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովող երաշխիքներ: Այս առումով ավելացվեցին նաև հանցագործությունից վնաս կրած անձի դատավարական իրավունքները:

Եթե նախկին քրեադատավարական օրենսդրությամբ տուժողն իրեն ընձեռված իրավունքներով ավելի պասիվ դերակատարում ուներ, ապա նոր օրենսդրությամբ վերջինիս կարգավիճակի փոփոխությունները նրա գործողությունները դարձրեցին մեղադրական բնույթի, տուժողը վերածվեց քրեական հետապնդման սուբյեկտի, մեղադրող ֆունկցիայի կրող:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն նշված չէ, որ տուժողը մեղադրող է, սակայն նրան վերապահված դատավարական լիազորությունների բնույթից կարելի է եզրակացնել, որ դրանք ուղղված են ոչ միայն վերջինիս շահերի վերականգնմանը, այլև հանցագործին մերկացնելուն:

Տուժողի կողմից մեղադրողի լիազորություններն իրականացնելու գործընթացն սկսվում է դեռևս նախաքննության փուլից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածը սահմանում է, որ տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը: Նման որոշում ընդունելուց հետո տուժողը ձեռք է բերում մի շարք իրավունքներ և պարտականություններ, սակայն այս փուլում վերջինս իր մեղադրական գործունեությունն իրականացնում է միջնորդավորված ձևով՝ քննիչի միջոցով, և սահմանափակվում է միայն, այսպես ասած, նրան աջակցություն ցուցաբերելով: Տուժողը ևս հնարավորություն է ստանում անձամբ ներկայացնելու փաստական տվյալներ, որոնք դատարանը կարող է ճանաչել որպես ապացույց, մասնակցելու դրանց հետազոտմանը, կարծիք հայտնելու հետազոտված ապացույցների վերաբերյալ, ներկայացնելու միջնորդություններ: Դատաքննության մրցակցային կառուցվածքը տուժողին հնարավորություն է տալիս իր շահերի պաշտպանության առումով լինելու ինքնուրույն և անկախ: Տուժողն ազատ է իր դիրքորոշումն արտահայտելու հարցում և հանդես է գալիս մեղադրողի դիրքերից: Տուժողի անկախությունն ու ինքնուրույնությունը դրսևորվում են նրանում, որ նա բացարձակապես կաշկանդված չէ հիմնական մեղադրողի՝ դատախազի դիրքորոշմամբ: Նա կարող է առարկել դատախազի ներկայացրած միջնորդությունների դեմ, ներկայացնել մեղադրանքը հիմնավորող այլ փաստական տվյալներ, մասնակցել դատական վիճաբանություններին, հանդես գալ մեղադրական ճառով, չընդունել մեղադրական եզրակացության եզրահանգումները կամ դրանք ընդունել մասամբ:

Թվում է, թե օրենսդիրը հանցագործությունից տուժած անձի համար ապահովել է բոլոր պայմաններն ու երաշխիքները՝

վերջինիս իրավունքների և օրինական շահերի ապահովման առումով, սակայն տուժողի մեղադրական գործունեությունը միանգամից սպառվում է, երբ դատախազը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306 հոդվածի կարգով հրաժարվում է մեղադրանքից: Նշված հոդվածը սահմանում է, որ մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը: Այս իրավիճակի վերաբերյալ տուժողի հետագա գործողությունների մասին օրենսդրական որևէ կարգավորում չկա. դրանով տուժողի մեղադրական գործունեությունն ավարտվում է: Վերջինիս վերապահված չէ՝ մեղադրանքից հրաժարվելու հիմքով կայացված արդարացման դատավճիռը բողոքարկելու իրավունք:

Այսպիսի մոտեցումը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածով հռչակված քրեական դատավարության մրցակցության սկզբունքի գաղափարին: Ստացվում է, որ քրեական դատավարության կողմ հանդիսացող տուժողի դատավարական գործառույթն անմիջականորեն կապված է դատավարության մեկ այլ մասնակցի՝ դատախազի ներքին հանգամունքի հիման վրա ձևավորված դիրքորոշման հետ: Եթե դատախազի մոտ մեղադրանքից հրաժարվելու գաղափար առաջանա, ապա տուժողը պետք է գրկվի իր դատավարական գործունեությունը (տվյալ դեպքում՝ մեղադրանքը) ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից: Այս տեսանկյունից կարևորելով տուժողի իրավունքների ապահովումը՝ Ա. Գամբարյանն առաջարկել է՝ դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում տուժողին իրավունք վերապահել արտահայտելու իր դիրքորոշումը մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ, մեղադրանքից հրաժարվելու հիմքով՝ ապահովելու կայացված արդարացման դատավճռի բողոքարկման իրավունք, մեղադրանքից հրաժարվելու հիմքով, արդարացման դատավճռի առկայության պայմաններում, քաղաքացիական դատավարության կարգով՝ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման ապահովում [3]:

Ա. Ղամբարյանի առաջարկած տեսակետը թեպետ բխում է տուժողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից, սակայն այն ամբողջական չէ և իրական հնարավորություն չի ստեղծում տուժողի կողմից իրականացնելու իր դեմ ոտնձգություն կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում:

Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելուց հետո տուժողը պետք է իրական հնարավորություն ունենա իր դիրքորոշումը ներկայացնելու և հանդես գալու՝ որպես անկախ մեղադրող:

Այս հանգամանքն հաշվի առնելով՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում նախատեսվել է սուբսիդար մեղադրողի ինստիտուտը [4]: Հիշյալ հայեցակարգի 8.24 կետում նշված է՝ «Հիմք ընդունելով հանցագործության գոհի (տուժողի) իրավունքների իրական ապահովման, ինչպես նաև դատարանի դերի բարձրացման անհրաժեշտությունը, Նախագիծը հնարավոր է համարում դատական քննությունը շարունակել դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում: Մասնավորապես, դատարանը կարող է շարունակել գործի քննությունը, եթե տուժողը, տվյալ պարագայում՝ սուբսիդար մեղադրողը, պահանջում է դա և ստանձնում մեղադրանքի պաշտպանությունը: Այս ինստիտուտն ուղղված է ոչ միայն տուժողի շահերի առավել արդյունավետ ապահովմանը, այլև պետական մեղադրանքի որակի բարձրացմանը»:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցներն առավել ուշադրություն են դարձրել հանցագործության հետեւանքով տուժած անձանց իրավունքների պաշտպանության խնդիրներին: Այս առումով հատկանշական է 1985թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված՝ «Հանցագործության և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիրը» [5], որը ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետություններին պարտավորեցնում է տուժողների համար ապահովել արդարադատու-

թյան մատչելիության և հասցված վնասի արագ փոխհատուցման իրավունքը, աջակցություն ցուցաբերել, որպեսզի դատական և վարչական ընթացակարգերը համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝ գործի վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու հնարավորության ապահովման և ազգային օրենսդրության համապատասխան դատաքննության բոլոր փուլերում պատշաճ օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

Մեկ այլ միջազգային-իրավական փաստաթուղթ՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985թ. ընդունված՝ «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R/85/11 երաշխավորությունը [6] դարձյալ նվիրված է հանցագործության հետևանքով վնաս կրած անձի իրավունքների ապահովմանը և նրանց դերի բարձրացմանը: Հանձնարարականի նախաքանում ասվում է. «Քրեական արդարադատության նպատակներն ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործառույթը հաճախ բարդացնում է տուժողի առջև ծագած խրնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը, մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը: Ելնելով ներկայացվածից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով»:

Միջազգային իրավունքում նկատվող տուժողի իրավունքների պաշտպանությանն ուղղված գործընթացն իր արտացոլումն է ստացել նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում:

Հասկանալի է, որ սուբսիդար մեղադրողի ինստիտուտը կիրառելի է միայն հանրային մեղադրանքի գործերով, քանի որ մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ հարուցելը և անձին քրեական պատասխանատվության ենթարկելը անմիջականորեն կապված է տուժողի կամարտահայտության հետ, այլ կերպ ասած՝ տուժողը մասնավոր մեղադրանքի գործերով հանդես է գալիս որպես լիարժեք մեղադրող:

Սուբսիդար մեղադրանքի ինստիտուտը քիչ է հետազոտվել: Իրավաբան-գիտնականների աշխատություններում սուբսիդար մեղադրանքի ինստիտուտը տարբեր կերպ է ընդունվել և մեկնաբանվել: Օրինակ՝ Ի. Ֆոյնիցկին, մասնավոր մեղադրանքը դասակարգելով ըստ տեսակների, առանձնացրել է գլխավոր մեղադրանքը. երբ մասնավոր անձն ինքնուրույն հանդես է գալիս որպես մեղադրող և լրացուցիչ (սուբսիդար) մեղադրանք ներկայացնող, երբ մասնավոր անձը մեղադրանքը պաշտպանում է հանրային մեղադրողի հետ միասին: Փաստորեն, Ի. Ֆոյնիցկին համարել է, որ սուբսիդար մեղադրողը կարող է հանդես գալ հանրային մեղադրողի հետ հավասարապես և օժանդակել վերջինիս գործունեությանը [7]:

Ի. Ֆոյնիցկու տեսակետին հակառակ կարծիք է արտահայտել Ն. Պոլյանսկին, որը սուբսիդար մեղադրանքը մեկնաբանել է որպես պետական մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում մասնավոր անձի կողմից մեղադրանք հարուցելը և պաշտպանելը, այսինքն՝ նշված հեղինակը սուբսիդար մեղադրանքը համարել է հիմնական մեղադրողի գործունեությանը բոլորովին չառնչվող, տուժողի կողմից իրականացվող առանձին քրեական հետապնդում իրականացնելու գործունեություն [8]:

Մեր կարծիքով՝ վերջին մոտեցումն ավելի ճիշտ է, քանի որ բովանդակային մեկնաբանությամբ այն հանցագործությունից վնաս կրած անձին առավել լայն հնարավորություններ է ընձեռում՝ իրականացնելու քրեական հետապնդման դատավարական լիազորությունը:

Քանի որ սուբսիդար մեղադրողի ինստիտուտն իրավագիտության ոլորտում բավարար չափով հետազոտված չէ, ուստի և

մասնագետները դրան ծանոթ են հիմնականում արտերկրի օրենսդրությունից, որտեղ ևս այս հարցում միակարծություն և միարժեք մոտեցումներ չկան:

Մի շարք եվրոպական երկրներում հանցագործության հետևանքով տուժած անձը համարվում է դատավարության լիիրավ կողմ և իրավասու է իր դատավարական կարգավիճակով ազդել գործի վարույթի և վերջնական ընթացքի վրա: Նշված երկրների շարքին են դասվում ինչպես նախկին խորհրդային ուղղվածություն ունեցող երկրները, որոնց դատական համակարգերը զարգացել են խորհրդային դոկտրինայի ազդեցությամբ, այնպես էլ ինքնուրույն և անկախ իրավական ավանդույթներ ունեցող երկրները: Օրինակ՝ Պորտուգալիայում տուժողը քրեական դատավարությանը մասնակցում է մեղադրողի օգնականի կարգավիճակում: Նա իրավունք ունի հարցաքննվելու որպես վկա, ներկայացնելու պաշտոնական մեղադրանքից տարբերվող մեղադրանք, դատախազի կողմից մեղադրանքը չպաշտպանելու կամ դրանից հրաժարվելու դեպքում՝ ներկայացնելու մեղադրանք, ինքնուրույն իրականացնելու վկաների հարցաքննություն, բողոքարկելու ամբաստանյալին արդարացնող դատավճիռը [9]:

Տուժողի կողմից քրեական հետապնդման գործառույթներ իրականացնելու առումով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարական օրենսդրությունը [10]: «Քրեական դատավարությունում տուժողի շահերի պաշտպանության մասին» 1987թ. ընդունված օրենքի համաձայն՝ այն անձինք, որոնց պատիվը, արժանապատվությունը և ֆիզիկական անձեռնմխելիությունը հանցագործության հետևանքով խախտվել են, իրավունք ունեն, որպես լրացուցիչ մեղադրողներ, դատախազի հետ միասին մասնակցելու քրեական դատավարությանը: Նրանք կարող են օգտվել փաստաբանի ծառայություններից, վերջինիս միջոցով ծանոթանալ գործի նյութերին, ներկայացնել միջնորդություններ և հայտնել կարծիք գործի ընթացքի վերաբերյալ:

Գերմանիայի օրենսդրությամբ հստակ կանոնակարգված է

տուժողի կողմից մեղադրյալի հետ հաշտվելու դեպքում մեղադրանքից հրաժարվելու գործընթացը: Մասնավոր մեղադրանք կարող է ներկայացվել միայն պոտենցիալ մեղադրյալի հետ տուժողին հաշտեցնելու գործընթացի բացասական արդյունքի դեպքում: Հաշտեցման գործընթացն օրենքով կանոնակարգված է. այն իրականացնում են արդարադատության մարմինների հատուկ բաժինները: Եթե հաշտեցնելու գործընթացն արդյունք չի տալիս, ապա այդ մասին իրազեկվում է մեղադրողը, որը իրավունք է ստանում մեղադրանք ներկայացնելու դատարան (Հոդված 380):

Գերմանիայի օրենսդրությամբ սահմանված է տուժողի կողմից գործի վարույթին մասնակցելու մեկ այլ ձև՝ համամեղադրողի ինստիտուտը: Տուժողի կողմից մեղադրողի հետ մեղադրանքը պաշտպանելու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել ցանկացած պահի, սակայն դա իրավաբանական ուժ է ստանում միայն դատախազի կողմից մասնավոր մեղադրանք հարուցելուց հետո:

Ռումինիայի օրենսդրությամբ [9] հանցագործության հետեվանքով վնաս կրած անձը կարող է մասնակցել քրեական դատավարությանը երեք կարգավիճակով՝ որպես տուժած, տուժող և քաղաքացիական հայցվոր: Տուժածը դատավարական կողմ չի համարվում, օժտված չէ դատավարական նախաձեռնությամբ և դատավարության մասնակից կարող է դառնալ միայն դատարանի ցանկության դեպքում: Այսինքն՝ տուժածի կարգավիճակն առավել չափով համընկնում է վկայի կարգավիճակին: Ի տարբերություն դրա՝ տուժողը գործին մասնակցում է որպես կողմ՝ օժտված բոլոր իրավունքներով, այդ թվում՝ մեղադրանքն ինքնուրույն պաշտպանելու իրավունքով:

Տուժողի իրավական կարգավիճակի առումով հատուկ ուշադրության է արժանի Հարավսլավիայի քրեադատավարական օրենսդրությունը [9]: Օրենքով նախատեսված մի շարք դեպքերում, նախատեսելով մասնավոր մեղադրողի հետ նաև սուբսիդար մեղադրողի ինստիտուտը, օրենսդիրը սահմանել է սուբսիդար մեղադրանքի առաջացման հատուկ պայմաններ՝

դատախազի կողմից հանրային մեղադրանք չհարուցելու և վերջինիս կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում: Օրենսդրի այսպիսի մոտեցումը, մեր կարծիքով, կապված է դատախազի գործունեությունը վերահսկելու գործում հասարակության անդամներին ներգրավելու հետ: Օրենքը նախատեսում է մի շարք դեպքեր, երբ տուժողն իրավունք է ստանում դատախազի փոխարեն հարուցելու հանրային մեղադրանք: Տուժողին նման բացառիկ իրավունքներ վերապահելով՝ օրենսդիրը կարծես թե վերջինիս դրդում է գործելու ոչ միայն անձնական, այլև հասարակության շահերից ելնելով:

Սուբսիդիար մեղադրողի՝ նախկին Հարավսլավիայի օրենսդրության մեջ կիրառվող մոդելը, մեր կարծիքով, առավել արդյունավետ է, քանի որ տուժողին վերապահված մեղադրողի իրավունքներն ուղղված են ոչ միայն վերջինիս շահերի պաշտպանությանը, այլև յուրահատուկ միջոց են քրեական հետապնդում իրականացնող պետական մարմիններին օժանդակելու, ինչպես նաև պաշտոնական մեղադրանքի որակը բարձրացնելու առումով:

Սուբսիդար մեղադրողի ինստիտուտը հանցագործության հետևանքով վնաս կրած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված ևս մեկ երաշխիք է, սակայն, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով, այն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում նախատեսելու դեպքում կյանքի չի կոչվի և չի կիրառվի:

Նման կարծիքի ձևավորման հիմքում ընկած է Հայաստանի Հանրապետությունում քննչական և դատական պրակտիկաների ուսումնասիրությունը: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ հանցագործության հետևանքով վնաս կրած անձինք նախաքննության և դատաքննության ընթացքում մեծ մասամբ դրսևորում են պասիվ վարքագիծ, որի պատճառով քննությունն իրականացնող մարմիններն ստիպված են լինում ավելորդ ջանքեր գործադրելու՝ տվյալ գործընթացում ներգրավելու համար: Որպես ասվածի հիմնավորում՝ կարելի է նշել տուժողների կող-

մից նախաքննության ավարտից հետո նյութերին չժանոթանալու, ինչպես նաև դատաքննություններին չներկայանալու հանգամանքները: Պրակտիկայից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ դատաքննությունները հաճախակի հետաձգվում են դատական նիստերին տուժողների չներկայանալու պատճառով: Լինում են դեպքեր, երբ տարբեր պատճառներից ելնելով, խուսափում են իրականությունը ներկայացնելուց, իսկ երբեմն էլ այն խեղաթյուրում են: Բացի դրանից, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատախազների՝ մեղադրանքից հրաժարվելը հաճախադեպ չէ, հետևաբար՝ հարց է առաջանում՝ արդյոք նման պայմաններում սուբսիդար մեղադրողի ինստիտուտ ներդնելը ձևական բնույթ չի կրելու և արդյոք այն կկիրառվի:

Որքան էլ սուբսիդար մեղադրանքի ինստիտուտը դրական դրսևորումներ ունենա, կարծում ենք, նախքան հայրենական քրեադատավարական օրենսդրության մեջ ներառելը, առաջին հերթին անհրաժեշտ է մասնագետների շրջանում լայն քննարկումներ անցկացնել և պարզել այն կիրառելու իրական հնարավորությունը:

Առաջբային հասկացություններ. *մասնավոր մեղադրանք, տուժող, մեղադրող, քրեական հետապնդում, խախտված իրավունքների վերականգնում, մեղադրական գործառույթ, քրեադատավարական օրենսդրություն, դատական պրակտիկա, սուբսիդար մեղադրանք:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հայաստանի** Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է 2005թ. - Երևան, 2005:
2. **Հայաստանի** Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (փոփոխություններով և լրացումներով, 2011թ. հունվարի 18-ի դրությամբ), - Երևան, 2011:
3. **Ա. Ղամբարյան**, Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը, Երևան, Իրավունք, 2009, էջ 95 - 97:
4. **Հայաստանի** Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը.

http://www.advocates.am/index.php?option=com_content&view=article&id (*Մուտքի ամսաթիվը՝ 07.11.2011*):

5. **Հանցագործության** և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիրը: (Ընդունվել է 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՍՍԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով):

URL: <http://www.policemonitoring.org/DownloadFile/308arm-Law.111.pdf> (*Մուտքի ամսաթիվը՝ 07.11.2011*):

6. **Рекомендация № R (85) 11** Комитета Министров Совета Европы "О положении потерпевшего в рамках уголовного права и процесса". (Принята Комитетом Министров 28 июня 1985г.).

URL: <http://www.soprotivlenie.org/?id=96>.

(*Մուտքի ամսաթիվը՝ 07.11.2011*):

7. **Фойницкий И. Я.**, Курс уголовного судопроизводства. СПб. Альфа, 1998. –Т. 2, с. 605-609.

8. **Полянский Н. Н.**, К вопросу о праве частных лиц на субсидарное обвинение,-М.: Лисснера и Собко, 1914. -27с.

9. **Правовые системы стран мира.** Энциклопедический справочник / Под ред. док. юр. наук, проф. А.Я.Сухарева. Изд. 3-е, изм., доп. – М.: 2011.

10. **Уголовно-процессуальный** кодекс Федеративной Республики Германии.- М.: Манускрипт, 1994.

К. С. БАТИКЯН

СУБСИДАРИННОЕ ОБВИНЕНИЕ: СУЩНОСТЬ И ПЕРСПЕКТИВЫ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА

Резюме

Статья посвящена анализу целесообразности внедрения института субсидиарной ответственности в уголовнопроцессуальном законодательстве Республики Армения и практике его применения. Автор проводит параллели с уголовнопроцессуальным законодательством зарубежных стран, в частности ФРГ, Румынии, Югославии, Португалии. В статье констати-

руется, что институт субсидиарной ответственности в отечественном уголовно-процессуальном праве и юридической науке в целом мало исследован. Приведены мнения различных авторов (Фойницкого И. Я., Полянского Н. Н., Гамбаряна А.) о сущности субсидиарной ответственности, которые подчас противоположны друг другу, однако многие из которых заняли прочное место в основе правовых систем современности.

Ключевые понятия: *частное обвинение, потерпевший, обвинитель, уголовное преследование, восстановление нарушенных прав, функция обвинения, уголовно-процессуальное законодательство, судебная практика, субсидиарное обвинение.*

K. S. BATIKYAN

SUBSIDIARY ACCUSATION: THE NATURE AND PROSPECTS IN THE LEGISLATION OF RA

Summary

The article analyzes the feasibility of implementation of the Institute of subsidiary liability in criminal and procedural law of the Republic of Armenia and its practical application. The author draws parallels with the criminal-procedural legislation of foreign countries, particularly in Germany, Romania, Yugoslavia and Portugal. The article states that the institution of subsidiary liability in the domestic criminal procedural law and legal science, in general is poorly studied. The views of various authors (I.Ya. Phoynickiy, N. N. Polyansky, A.Ghambaryan) on the essence of vicarious response are presented, which are sometimes opposed to each other, though many of them are well positioned in the basis of today's legislation systems.

Key concepts: *private prosecution, victim, prosecutor, criminal prosecution, a remedy for prosecution, the criminal and procedural law, litigation, prosecution subsidiary.*

ԼԻՍԱԲՈՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՐԱ

Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրոպական միությունը (ԵՄ)՝ որպես քաղաքական միավորման տարատեսակ, հիմնվել է ժամանակակից այնպիսի խընդիրներ լուծելու նպատակով, որոնք առանձին պետություններ չէին կարող հաղթահարել միայնակ: ԵՄ-ն ունի կառավարման և իրավական յուրահատուկ համակարգ, որի նմանը չի եղել ոչ պատմականորեն, ոչ էլ ժամանակակից աշխարհում: Իր խնդիրները լուծելու և նպատակներն իրականացնելու համար ԵՄ-ն ստեղծել է մարմինների մի յուրահատուկ համակարգ, ձեռք է բերել ակնհայտ քաղաքական և իրավական ինքնուրույնություն:

Եվրոպական միությունը գտնվում է անընդհատ շարժման մեջ՝ փոփոխելով ինչպես իր նպատակները, այնպես էլ դրանք իրականացնելու մոտեցումները: Սույն ուսումնասիրությունը նրպատակ ունի գնահատելու Լիսաբոնի պայմանագրի ազդեցությունը ԵՄ ինստիտուտների և, մասնավորապես, դատական իշխանության մարմինների վրա՝ Միության առջև դրված խնդիրների և դրանց լուծման համար ընտրված եղանակների լույսի ներքո:

Եվրոպական իրավունքն արդիականության առավել դինամիկ իրավական համակարգերից է: Վերջին տարիների ընթացքում այն կրել է մի շարք առանցքային փոփոխություններ, որոնք կապված են եվրոպական ինտեգրման գործընթացի, ինչպես նաև վերջինիս կայացման ու կատարելագործման իրավական հիմքը կազմող հիմնադիր ակտեր մշակելու և գործողության մեջ դնելու հետ:

Եվրոպական միությունն իր ստեղծման պահից (Եվրոպայի ածխի և պողպատի համայնքի ստեղծումը 1951 թվականին) կրել է բազմաթիվ փոփոխություններ, որոնք ձևակերպվել են արդի մարտահրավերներին դիմակայելուն ուղղված միջազգային պայմանագրերի տեսքով: ԵՄ ներկայիս կառուցվածքի

վրա իրենց ազդեցությունն ունեցած կարևորագույն միջազգային իրավական փաստաթղթերից են Ամստերդամի (1997), Նիցցայի պայմանագրերը (2000), Եվրոպական միության խարտիան մարդու հիմնական իրավունքների մասին (2000), Լաեկեների հռչակագիրը (2001) և այլն:

Նոր պետությունների մուտքը Եվրոպական միություն պահանջում էր բարեփոխումներ ոչ միայն անդամության թեկնածու պետություններում, այլև հենց ԵՄ համակարգում: Անհրաժեշտ էր այսպես կոչված վերակառուցում իրականացնել Միության ղեկավար մարմիններում՝ նպատակ ունենալով ամրապնդել դրանց կառուցվածքային և գործառութային վերազգային հիմքերը [1,109]: Այսպիսով՝ Միության ընդլայնումը որոշակի խթանի դեր է կատարում Եվրոպայում քաղաքական կենտրոնացվածության և համադաշնային բնույթի ուժեղացման գործում: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, անդամ-պետությունների կողմից օրինագծերի և այլ որոշումների ընդունման հետ կապված վետոյի իրավունքի կիրառման դեպքերի կրճատմանը, որը նկատելիորեն նվազեցնում էր Միության գործունեության արդյունավետությունը, իսկ ԵՄ-ի ընդլայնման աճող միտումը, մեծ թվով պետություններ իր կազմում ունենալու դեպքում նրանցից յուրաքանչյուրի կողմից վետոյի իրավունքից օգտվելու հնարավորությունը կարող էր պարզապես կաթվածահար անել կազմավորման ողջ աշխատանքը:

Որոշ փոփոխությունների կարիք ունեին նաև վերազգային ինստիտուտները: Օրինակ՝ XXI դարի սկզբին գործող ԵՄ երկու դատական ատյանների՝ ԵՄ դատարանի և Առաջին ատյանի դատարանի համար ավելի ու ավելի էր բարդանում լուծել գործերը, որոնց աճող քանակը ԵՄ նոր անդամ-պետությունների ընդգրկվելու պարագայում ի վերջո կվերածվեր վեճերի անվերջանալի հորձանուտի:

Դեռևս մինչև Նիցցայի պայմանագրի՝ 2001 թվականին ուժի մեջ մտնելը, սկսվեց Եվրոպական միության հիմնադիր փաստաթղթերի վերանայման գործընթացը: Դրա առաջին ծրագրային նախադրյալները կային Նիցցայի պայմանագրին կից

«Միության ապագայի մասին» հռչակագրում: Նույն թվականին հռչակագրի դրույթները լրացվեցին և ճշգրտվեցին նոր փաստաթղթում, որն անվանվեց «Հռչակագիր Եվրոպական միության ապագայի մասին», որն ավելի հայտնի է որպես «Լաեկենի հռչակագիր»:

Հենց Լաեկենի հռչակագրում առաջինն ընդունվեց Միության միասնական սահմանադրության փաստաթղթի նախապատրաստման անհրաժեշտությունը, որը կոչված էր փոխարինելու Եվրամիության գործող հիմնադիր փաստաթղթերը՝ նպատակ ունենալով բարձրացնելու ինտեգրման մեխանիզմների գործողության արդյունավետությունը և դրանք դարձնելու առավել ժողովրդավարական: Անդամ երկրների միջկառավարական համաժողովի արդյունքում 2004 թվականի հոկտեմբերի 29-ին Հռոմում հանդիսավոր կերպով ստորագրվեց Եվրոպայի համար Սահմանադրություն հանդիսացող պայմանագիրը, որը ոչ պաշտոնապես անվանվեց Եվրոպական սահմանադրություն: Չնայած իր անվանը՝ այն վերաբերում է միայն Եվրոպական միության անդամ երկրներին և ոչ ամբողջ Եվրոպային՝ աշխարհաքաղաքական իմաստով [2, 24]:

Նոր հիմնադիր փաստաթղթի անվանման մեջ պարզորոշ արտացոլված էր Եվրոպական միության իրավական խառը բնույթը. մի կողմից՝ միջազգային պայմանագիր էր, որը կարիք ուներ բոլոր անդամ-երկրների կողմից վավերացման, մյուս կողմից՝ այդ պայմանագիրը Սահմանադրություն էր ստեղծում քաղաքական իշխանության վերազգային կազմակերպման համար և հնարավորություն էր տալիս պետության նմանությամբ ղեկավարելու հասարակությունը, սակայն ոչ թե մեկ, այլ եվրոպական մի շարք պետությունների մասշտաբով:

Չնայած Եվրոպական սահմանադրությունն անցել է հասարակական քննարկման երկար ճանապարհ և նշանակալից ներդրում է Եվրոպական միության ինտեգրացման մեխանիզմների կատարելագործման մեջ, այնուամենայնիվ, այս պատմական կարևորագույն փաստաթուղթը՝ նախնական ստորագրված տես-

քով, գործողության մեջ դնել չհաջողվեց: Չքննարկելով դրա խորքային պատճառները՝ այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ ԵՄ որոշ անդամ-երկրներում անցկացված հանրաքվեների արդյունքում Սահմանադրության չընդունելը պայմանավորված էր ոչ այնքան Սահմանադրության տեքստի վերաբերյալ գոյություն ունեցող դժգոհությամբ կամ անբավարարվածությամբ, որքան սոցիալ-քաղաքական այլ գործոններով, այն է՝ դեպի Արևելք Եվրոպական միության հետագա ընդլայնումն անցանկալի համարելու, գործազրկության և հանցավորության աճի, Եվրամիության՝ եվրոպական «գերպետություն» դառնալու և այլ պատճառներով:

Սահմանադրության հակառակորդները բողոքում էին գլոբալացման, 2004 թվականին ԵՄ ընդլայնման հետևանքների, Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության դեմ, իսկ Նիդեռլանդներում ընտրողները դեմ էին Եվրոպական միության անդամ խոշոր երկրների լայն իրավունքներին [3, 24]:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ մոտավորապես երկամյա դադարից հետո, ԵՄ անդամ երկրների ղեկավարները որոշեցին վերստին ձեռնամուխ լինել սահմանադրական բարեփոխումներին՝ պահպանելով Սահմանադրության տեքստի հիմնական նպատակներն ու նորամուծությունները, սակայն հրաժարվելով «սահմանադրություն» եզրույթից:

Եվրոպական միության անդամ երկրների՝ 2007թ. աշնանը կայացած միջկառավարական նոր համաժողովի ժամանակ 2004թ. Սահմանադրության նախագիծը որոշ փոփոխություններով վերակազմվեց «Բարեփոխման մասին պայմանագրի», որն իրենից ներկայացնում է ինստիտուցիոնալ փոփոխությունների մի համակցություն: Հիշյալ փոփոխությունները ներառվել են ԵՄ գործող հիմնադիր փաստաթղթերում: Տվյալ փաստաթուղթը ԵՄ բոլոր անդամ-երկրների կողմից ստորագրվեց 2007 թվականի դեկտեմբերի 13-ին Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում և ստացավ «Եվրոպական միության մասին պայմանագիրն ու Եվրոպական համայնքների ստեղծման մասին պայմանագիրը փոփոխող Լիսաբոնի պայմանագիր» անվանումը, կրճատ՝

«Լիսաբոնի պայմանագիր»:

Լիսաբոնի պայմանագիրը կոչված է փոխարինելու ուժի մեջ չմտած ԵՄ Սահմանադրությանը և փոփոխելու Եվրոպական միության մասին գործող համաձայնագիրը՝ ԵՄ կառավարման համակարգը բարեփոխելու, 27 անդամ-երկրների կազմով ԵՄ գործունեությունը բարելավելու, ինչպես նաև սրընթաց գլոբալ փոփոխությունների պայմաններում համաշխարհային ընդգրկմամբ ամրապնդելու ԵՄ դերն ու դիրքը:

Եվրոպական միության հիմնադիր փաստաթղթերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված էր ընդամենը երկու տարվա ընթացքում անդամ-երկրների թվի աճով (15-ից՝ 27), իսկ նրա բնակչության ընդհանուր թիվը հասավ գրեթե կես միլիարդի: Բարեփոխումների մասին պայմանագիրն ամրագրեց ԵՄ անդամ երկրների և Եվրոպական միության նպատակների ու շահերի հաշվեկշիռը:

2009 թվականի նոյեմբերի 13-ի դրությամբ՝ պայմանագիրը հաստատել էին ԵՄ բոլոր 27 անդամ երկրները. այն ուժի մեջ մտավ 2009 թվականի դեկտեմբերի 1-ից: Նոր պայմանագիրը փոխում է Եվրոպական միության արժեքներն ու նպատակները (Եվրամիության մասին պայմանագիր, 2-րդ և 3-րդ հոդվածներ):

Բարեփոխումների մասին պայմանագիրը «Եվրոպական համայնքների կազմավորման մասին» համաձայնագրի անվանումը փոփոխում է «ԵՄ գործունեության մասին» պայմանագրի, որն ուղղակի կապ է ստեղծում վերջինիս և Եվրոպական միության մասին պայմանագրի ու նրա նպատակների միջև:

Այդպիսով՝ նախկինում դեկլարատիվ բնույթ ունեցող ըսկրզբունքները (ԵՄ քաղաքացիների պաշտպանությունն ամբողջ աշխարհում, տնտեսական, սոցիալական և տարածքային ամբողջականությունը, մշակութային բազմազանությունը և այլն), ի թիվս սոցիալական նպատակների, դառնում են ԵՄ քաղաքականության միանգամայն իրական և հիմնարար սկզբունքներ:

Եվրոպական միության համար նոր խնդիր է դառնում նաև «ներքին շուկայի» ձևավորումը և դրա հետ մեկտեղ մի շարք այլ խնդիրների լուծումը, ինչպիսիք են լիարժեք զբաղվածություն-

նը, սոցիալական առաջընթացը, շրջակա միջավայրի պահպանության բարձր մակարդակը, սոցիալական արդարությունը, երեխաների իրավունքների պաշտպանությունը և այլն:

Լիսաբոնի պայմանագիրը փոփոխություններ մտցրեց ԵՄ մասին պայմանագրում նաև Միության ինստիտուտներին առնչվող հարցերում: Օրինակ՝ Եվրոպական խորհուրդը դարձավ ԵՄ լիիրավ մարմին. ներդրվեց Եվրոպական խորհրդի մշտական նախագահի պաշտոնը, սահմանվեց նաև այն դրույթը, որի համաձայն նախագահը պետք է ընտրվի եվրոպական երկրների առաջնորդների կողմից՝ 2,5 տարի ժամկետով՝ երկրորդ անգամ վերընտրվելու հնարավորությամբ. Եվրոպական խորհրդի մշտական նախագահին իր իրավասությունների շրջանակներում պետք է Եվրոպական միությունը ներակայացնի արտաքին քաղաքականության մեջ, ինչպես նաև զբաղվի ԵՄ ընդհանուր արտաքին քաղաքականության մշակման և անվտանգության քաղաքականության իրականացման հարցերով:

Եվրոպական խորհրդարանը կիրականացնի օրենսդիր գործառույթներ, իսկ ԵՄ բյուջեի հետ կապված գործառույթները կիրականացնի Խորհրդի հետ միասին: Խորհրդարանը կստանա առավել լիարժեք իշխանություն, քանի որ նրա՝ որպես օրենսդիր մարմնի կշիռը՝ կհավասարվի Խորհրդի կշռին: Խորհրդարանին է վերապահվում նաև Եվրոպական հանձնաժողովի նախագահի ընտրության իրավունքն այն դեպքում, երբ նախկինում խորհրդարանն իրավասու էր միայն հավանություն տալու անդամ երկրների ներկայացուցիչների կողմից առաջադրված թեկնածույանը: Խորհրդարանում ներդրվել է տեղերի բաշխման նոր համակարգ (յուրաքանչյուր երկրից նվազագույնը՝ 6 և առավելագույնը՝ 96 ներկայացուցիչ): Սակայն այս համակարգը կըզործի միայն 2014 թվականից, քանի որ մինչ այդ նախատեսված է անցումային շրջան (ԵՄ մասին պայմանագիր, հոդված 9):

Խորհրդում փոփոխությունները վերաբերում են որակյալ մեծամասնության սկզբունքով քվեարկության նոր համակարգի ներդրմանը: 2014 թվականից սկսած՝ որակյալ մեծամասնություն է համարվելու Խորհրդի անդամների ձայների նվազագույնը

55%-ը առնվազն՝ 15 երկիր), որը ներկայացնում է Եվրոպական միության բնակչության նվազագույնը 65%-ը:

Ներկայումս գործող որակյալ մեծամասնության սկզբունքի համաձայն՝ անհրաժեշտ է Խորհրդի 345 անդամների 255 ձայնի առկայությունը (այսինքն՝ 73,9%), որը կազմում է 27 անդամ-երկրների ձայների մեծամասնությունը (14 երկիր) և ԵՄ բնակչության 62%-ը [4,148]:

Եվրոպական միության իրավական համակարգի զարգացման մեջ առանձնահատուկ դեր ունի ԵՄ դատարանը: Ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ և՛ Եվրոպական միությունը, և՛ նրա իրավունքը այլ կլինեին՝ պակաս զարգացած, պակաս ժողովրդավարական, ավելի փոքր իրավասությամբ և ցածր հեղինակությամբ, եթե ԵՄ ինստիտուտների համակարգում չլիներ այնպիսի մարմին, ինչպիսին Եվրոպական միության դատարանն է:

ԵՄ Դատարանը շարունակում է մնալ ԵՄ ժողովուրդների կյանքի բոլոր ոլորտներում ինտեգրման գործընթացների ամենաակտիվ «շարժիչներից» մեկը: Եվրոպական դատարանի հեղինակության և ազդեցության մեծացմանը նպաստել են Ամստերդամի, Նիցցայի և վերջերս էլ՝ Լիսաբոնի պայմանագրով նրա իրավագործության ընդլանումը [5, 317]:

Անդրադառնալով ԵՄ դատական իշխանության մարմինների վրա Լիսաբոնի պայմանագրի ազդեցությանը՝ նախ անհրաժեշտ է անդրադարձ կատարել մինչ այդ գոյություն ունեցող կարգին՝ Լիսաբոնի պայմանագրով ամրագրված փոփոխություններն առավել ընկալելի դարձնելու համար:

Եվրոպական համայնքների միասնական դատարանը ձևավորվել է 1957 թվականին՝ հատուկ ակտի հիման վրա: «Եվրոպական միության մասին» պայմանագիրը դատարանին տվեց հատուկ կարգավիճակ և որոշակիորեն դասեց ԵՄ գլխավոր ինստիտուտների շարքին: ԵՄ դատարանները կոչված են ԵՄ իրավասության շրջանակներում ապահովելու ԵՄ իրավունքի միատեսակ մեկնաբանումը և կիրառումը Եվրոպական միության ամբողջ տարածքում:

Սկզբում ԵՄ դատարանը բաղկացած էր երկու դատական ատյաններից (Եվրոպական համայնքների դատարան և Առաջին ատյանի դատարան), որոնք ԵՄ փաստաթղթերում հանդես են գալիս «Եվրոպական արդարադատության դատարան» ընդհանուր անունով: 2001թ. Նիցցայի պայմանագիրը որոշակի փոփոխության ենթարկեց ԵՄ դատական մարմինների ձևավորման կարգը: Բարեփոխելով ԵՄ դատական համակարգը՝ Նիցցայի պայմանագիրը հատուկ տարբերակում մտցրեց ԵՄ դատարանի և Առաջին ատյանի դատարանի միջև՝ որպես ինքնուրույն դատական ատյանների: Միևնույն ժամանակ Նիցցայի պայմանագրի 220-րդ հոդվածը սահմանեց մի դրույթ, որի համաձայն՝ «ԵՄ դատարանը և Առաջին ատյանի դատարանը՝ յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում, ապահովում են Համայնքի իրավունքի կիրառումը համապատասխան Պայմանագրի միատեսակ մեկնաբանման և կիրառման միջոցով»: Այսինքն՝ իր բովանդակությամբ և նշանակությամբ նույնական խնդիր է դրվում ԵՄ դատական համակարգը կազմող տարբեր դատական ատյանների վրա:

ԵՄ ձախողված Սահմանադրությունը, ամրագրելով դատական համակարգի եռաստիճան բնույթը, փաստում էր, որ Սահմանադրությունը մեկնաբանելիս և կիրառելիս այն ապահովում է իրավունքների միատեսակ կիրառությունը, այսինքն՝ որոշակիորեն ստանձնում էր նաև Սահմանադրական դատարանի լիազորություններ:

ԵՄ Սահմանադրությամբ նախատեսված էին նաև դատարանի ձևավորման կարգի փոփոխություններ, մասնավորապես, դատավորի կամ գլխավոր փաստաբանի պաշտոնի թեկնածուների ընտրության նպատակով պետք է ստեղծվեր փորձագիտական կոմիտե:

Նիցցայի պայմանագիրը նախատեսում էր ԵՄ դատարանի կազմում ԵՄ յուրաքանչյուր անդամ-պետությունից մեկ անդամ, իսկ Առաջին ատյանի դատարանում՝ «յուրաքանչյուր անդամ-պետությունից՝ առնվազն մեկ անդամ», ինչը հնարավորություն էր տալիս ընդլայնելու Առաջին ատյանի դա-

տարանի կազմը, եթե դրա անհրաժեշտությունն առաջանար: Ինչպես Առաջին ատյանի դատարանի դատավորների, այնպես էլ գլխավոր փաստաբանների թվի ավելացման հետ կապված հարցերը գտնվում են Խորհրդի իրավասության տակ:

Դատարանի կազմը ձևավորվում է դատավորներից և գլխավոր փաստաբաններից: Վերջիններս ունեն լիազորությունների հատուկ շրջանակ. նրանք անցկացնում են գործի հանգամանքների սեփական անկախ քննություն և դատական նիստի եզրափակիչ փուլում ներկայացնում են վերլուծության արդյունքները՝ դրանով իսկ օգնելով Դատարանին՝ լուծելու գործը: Հարկ է նշել նաև, որ ԵՄ դատարանը կաշկանդված չէ գլխավոր փաստաբանի եզրակացությամբ. դատարանի համար այն ունի միայն խորհրդատվական նշանակություն: Նիցցայի պայմանագրով և դատարանի կանոնադրությամբ սահմանվեց, որ եթե քննվող գործն «իրավունքի բնագավառում նոր հարցեր չի բացահայտում», ապա դատարանը կարող է որոշում ընդունել գործը քննելու մասին՝ առանց գլխավոր փաստաբանի մասնակացության [1, 469]:

Նիցցայի պայմանագրի համաձայն՝ ԵՄ դատարանում և Առաջին ատյանի դատարանում գործերի քննությունն իրականացվում է պալատների կողմից: Կանոնադրության համաձայն՝ դրանք կարող են լինել երեք կամ հինգ դատավորից կազմված պալատներ, ինչպես նաև Մեծ պալատը՝ կազմված տասնմեկ դատավորից:

Առաջին ատյանի դատարանի կազմում որպես հատուկ դատական ատյաններ կարող են ստեղծվել մասնագիտացված դատական պալատներ: Պալատ հիմնելու որոշումն ընդունվում է Խորհրդի կողմից՝ միաձայնության սկզբունքի հիման վրա, ԵՄ Հանձնաժողովի կամ Դատարանի առաջարկով, Խորհրդարանի հետ խորհրդակցելուց հետո:

Լիսաբոնի պայմանագրով առանձնապես մեծ փոփոխություններ չի կրել դատարանի կազմավորման կարգը, սակայն փոփոխություններ են արվել Եվրոպական միության դատական համակարգում՝ սկսած դատարանների անվանումներից, մինչև

ընթացակարգեր: Այսպես՝ Եվրոպական համայնքների արդարադատության դատարանը վերանվանվել է Եվրոպական միության արդարադատության դատարան, որը ներառում է Արդարադատության դատարանը, Ընդհանուր իրավասության դատարանը և մասնագիտացված դատարանը: Այս համակարգը համապատասխանում է չընդունված ԵՄ Սահմանադրությամբ ամրագրված դատական համակարգի եռաստիճան բնույթին:

Փաստորեն, Առաջին ատյանի դատարանը վերանվանվել է Ընդհանուր իրավասության դատարան: Մասնագիտացված դատարանները կցված են Ընդհանուր իրավասության դատարանին և ստեղծվում են Խորհրդի ու Եվրոպական խորհրդարանի կողմից՝ օրենսդրական նախաձեռնության շրջանակներում:

Լիսաբոնի պայմանագրով ընդլայնվել է Արդարադատության դատարանի ընդդատությանը ենթակա գործերի շրջանակը: Այսինքն՝ ներկայումս Արդարադատության դատարանին ընդդատյա են ԵՄ նախկին երրորդ հենասյանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ միգրացիային, ապաստանի տրամադրմանը, քրեական իրավունքին, ոստիկանությանը և խտրականության արգելմանն առնչվող գործերը:

Մեծացել է նաև գործերի վերանայման հնարավորությունը: Մասնավորապես, Արդարադատության դատարանն այժմ իրավասու է վերանայելու Եվրոպական խորհրդի որոշումները, ինչի արդյունքում վերազգային ինստիտուտին իրավունք է վերապահվում ԵՄ 27 անդամ-երկրներին հայտնելու, որ նրանց ընդունած որոշումն անօրինական է [6, 45]:

Վերոշարադրյալից բացի, ավելի մեծ թվով կողմեր (այսինքն՝ ոչ միայն ԵՄ մարմիններ, այլև մասնավոր անձինք) կարող են դիմել դատարան՝ վիճարկելու զանազան օրենսդրական և վարչական ակտեր [7, 8]:

Այսպիսով՝ ԵՄ դատարանը շարունակում է հաջողությամբ իրականացնել սահմանադրական, վճռաբեկ և վարչական դատարանների գործառույթները:

Լիսաբոնի պայմանագրով նախատեսվել է նաև դատավորների և գլխավոր փաստաբանների թեկնածությունների վե-

րաբերյալ կարծիք հայտնելու իրավասությամբ օժտված մարմնի ստեղծումը, որի շնորհիվ իրականացել է ԵՄ Սահմանադրությամբ նախատեսված՝ դատավորի կամ գլխավոր փաստաբանի թեկնածուների ընտրության նպատակով փորձագիտական կոմիտե ստեղծելու գաղափարը:

Նոր ձևակերպման համաձայն՝ այն ոչ թե փորձագիտական կոմիտե է, այլ խորհուրդ, որը բաղկացած է յոթ անդամներից, որոնք ընտրվում են Արդարադատության դատարանի և Ընդհանուր իրավասության դատարանի նախկին դատավորներից, անդամ պետությունների բարձրագույն դատական մարմինների դատավորներից և հեղինակավոր իրավաբաններից: Մեկ այլ փոփոխությամբ էլ գլխավոր փաստաբանների թիվը 8-ից հասել է 11-ի:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ դատարանում գործերի քննության և լուծման կարգը: ԵՄ դատարանը՝ որպես իրավունքի պահապան և արդարադատություն իրականացնող մարմին, գործերի քննությունը և որոշումների ընդունումն իրականացնում է հատուկ դատավարական կարգով: Դատավարական կարգի էական հատկանիշներից առանձնացնենք երկուսը.

1. Դատավարության բոլոր փուլերում դատարանն ակտիվ դեր է կատարում և կիրառում է այսպես կոչված հետաքննչական դատավարություն՝ ի տարբերություն անգլիական «մրցակցային դատավարության»:

2. Դատավարության երկու հիմնական փուլերի՝ գրավոր և բանավոր դատավարությունների առկայությունը պարտադիր բնույթ չի կրում, այսինքն՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում թույլատրվում է գործի քննությունն առանց բանավոր փուլն անցկացնելու [8, 76]:

Եվրոպական արժեքների շարքում իր ուրույն տեղն ու դերն ունի մարդու իրավունքների պաշտպանության հարցը: Մարդու հիմնական իրավունքներն իրենց համակցությամբ, ապահովում են մարդու և հասարակության առաջընթաց զարգացումը: Դրանց իրականացումը խոչընդոտելը սպառնում է

իրավունքների համակարգային միասնականությանը և որոշակի վտանգ է ներկայացնում մարդու և հասարակության բնականոն կեցության համար:

Մարդու հիմնական իրավունքները սոցիալական խաղաղության հիմքն են: Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչումն ու պահպանումն ինչպես առանձին երկրների, այնպես էլ ամբողջ երկրագնդի անվտանգության հենքն են: «Խաղաղություն», «առաջընթաց», «մարդու իրավունքներ»․ այս երեք հասկացությունները գտնվում են անբակտելի կապի մեջ: Հնարավոր չէ հասնել դրանցից որևէ մեկին՝ անտեսելով մյուսները: Մարդու իրավունքների պահպանումը, դրանց հետևելը նշանակում է վախի, ատելության, ագրեսիայի, պատերազմի բացառում [9, 16]:

Այդ դրական գործոնը շեշտվում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում․ «... Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին բնորոշ արժանապատվության, նրանց հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է» [10, 4]:

Նույն սկզբունքներն է որդեգրել նաև Եվրոպական միության խարտիան մարդու հիմնական իրավունքների մասին (2000): Ինստիտուցիոնալ բարեփոխումներին զուգահեռ՝ Եվրոպական միությունը սկսել է նաև մարդու հիմնական իրավունքների մասին միասնական, համապարփակ փաստաթղթի նախագծման աշխատանքները: Խարտիան ընդունվել է Նիցցայի պայմանագրի հետ գրեթե միաժամանակ՝ 2000թ. դեկտեմբերի 7-ին․ այս որը միջազգային փաստաթղթերում ճանաչված մարդու իրավունքների համալիր փաստթուղթ է: Վերջինս կարևորվում է այնքանով, որ ինչպես ազգային դատարանները, այնպես էլ Արդարադատության եվրոպական դատարանը Խարտիայի դրույթներին համապատասխան պարտավորվում են ԵՄ իրավունքի շրջանակներում կիրառել դրանում ամրագրված դրույթները:

Ժամանակները, երբ ԵՄ-ը համարվում էր մարդու իրա-

վունքներին որևէ առնչություն չունեցող սուկ տնտեսական կազմավորում, վաղուց անցել են: Դեռ անցած դարի յոթանասունականներին ԵՄ դատարանը Եվրոպական միության իրավունքին տվեց նոր ձևաչափ՝ ներառելով նաև մարդու իրավունքները:

Ներկայումս ԵՄ դատարանի՝ մարդու իրավունքներին առնչվող հարցերի պրակտիկան դառնում է առավել բազմազան և ընդգրկուն: ԵՄ դատարանի ժամանակակից պրակտիկայի առանձնահատկությունը դարձել է իր կողմից լուծվող վեճերի ԵՄ ինստիտուտների և մարմինների կողմից մարդու հիմնական իրավունքների խախտման ենթադրյալ դեպքերի բազմազանեցումը: Այդուհանդերձ, Դատարանի պրակտիկայում հաճախադեպ են դառնում ոչ թե ԵՄ մարմինների, այլ ԵՄ անդամ-պետությունների կողմից մարդու իրավունքների խախտման վերաբերյալ գործերը:

Եվրոպական մակարդակում անձի հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում Լիսաբոնի պայմանագրի առավել կարևոր ներդրումը «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության 2000 թ. դեկտեմբերի 7-ի խարտիայի ճանաչումն է՝ որպես իրավաբանական պարտադիր ուժ ունեցող իրավունքի աղբյուրի:

ԵՄ-ը հարգում է Մարդու իրավունքների խարտիայում ամրագրված իրավունքները, ազատությունները և սկզբունքները: Մարդու իրավունքների խարտիան «ունի իրավաբանական նույն ուժը, ինչ՝ Միության հիմնարար պայմանագրերը» (Եվրոպական միության մասին պայմանագրի 6-րդ հոդված): Չնայած Խարտիայի տեքստը չի ներառվել պայմանագրում, սակայն նրա դրույթները կատարման համար պարտադիր են: Տվյալ փոփոխությունը կատարվել է՝ նպատակ ունենալով ապահովել ԵՄ հանձնարարականների և փաստաթղթերի համապատասխանությունը Խարտիայում ամրագրված սկզբունքներին [6, 45]: Լիսաբոնի պայմանագրի հաջորդ էական նորույթը դարձավ Եվրոպական միության՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիային միանալու լիազորության վերաբերյալ դրույթը:

Այդ դրույթի իրացումը կծառայի համաեվրոպական մասշտաբով մարդու իրավունքների ապահովման նկատմամբ առավել արդյունավետ վերահսկողությանը, քանի որ՝

1. Միության վերազգային մարմինների որոշումները (այդ թվում՝ Եվրոպական միության դատարանի) հնարավոր կլինի վիճարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում,

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի նախադեպային իրավունքի հիման վրա միաժամանակ կապահովվի և՛ Եվրոպական միության 2000թ. խարտիայում, և՛ 1950թ. Եվրոպական կոնվենցիայում բովանդակվող հիմնարար իրավունքների միակերպ մեկնաբանությունը:

Հետևաբար՝ կարելի է փաստել, որ Եվրոպական միության տարածաշրջանի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական համակարգը, այդուհանդերձ, հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վրա, որը մնում է առավել հասանելի, կարևոր և որոշիչ, իսկ ԵՄ դատարանը հաջողությամբ լրացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ հաշվի առնելով ինտեգրացիոն ոլորտներն ու յուրահատկությունը [4, 332]:

2007թ. Լիսաբոնի պայմանագիրն ամբողջությամբ պահպանում է Եվրոպական միության սահմաններում մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմքերի այլ տարրերը՝ ԵՄ քաղաքացիությունը (Եվրոպական միության հետ անդամ-պետությունների քաղաքացիների կայուն իրավական կապը), մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի սկզբունքները (հավասարության սկզբունք, սեփականության անձեռնմխելիության սկզբունք, խախտված իրավունքների վերականգնման և դրանց դատական պաշտպանության սկզբունք և այլն), ինչպես նաև իրավունքների և ազատությունների երաշխիքները:

Այսպիսով՝ Լիսաբոնի պայմանագրով առաջին անգամ ներդրված «Ժողովրդավարական սկզբունքների մասին» դրույթների շրջանակներում քաղաքացիներին տրվել են լրացուցիչ իրավունքներ և երաշխիքներ՝ մասնակցելու Եվրոպական միության կառավարմանը, որն է՝ Միության ինստիտուտների կողմից

ընդունման ենթակա նոր նորմատիվ ակտերի մշակում նախաձեռնելու իրավունքը՝ «քաղաքացիական նախաձեռնություն» [1, 471]:

Երբ 2005 թվականին Սահմանադրությունը մերժվեց, Եվրոպական միությունը հայտնվեց ինստիտուցիոնալ փակուղու առջև: Փակուղուց դուրս գալու համար անհրաժեշտ էր լրջորեն պարզեցնել կոլեկտիվ մարմինների կառուցվածքը, նրանց գործունեության սկզբունքներն ու կարգը՝ դարձնելով դրանք առավել թափանցիկ և հասկանալի. ահա այս խնդիրն է լուծում Լիսաբոնի պայմանագիրը: Կարելի է եզրակացնել, որ որպես «գործիք» մտածված այս նորարարական պայմանագիրը կոչված է առաջիկա 15-20 տարիների համար նախանշելու Եվրամիության գործունեության հիմնական ուղղությունները, ուստի նրա նշանակությունն ինչպես Եվրոպական միության կայացման, այնպես էլ եվրոպական իրավունքի զարգացման բնագավառում անգնահատելի է:

Այսպիսով՝ չթերագնահատելով ԵՄ մյուս մարմինների կարևորությունը, կարող ենք նշել, որ ԵՄ դատարանը հաջողությամբ է կատարում ԵՄ իրավունքի պահպանի դերը ԵՄ ողջ տարածքում, ԵՄ իրավունքի միատեսակ մեկնաբանումն ու կիրառումն ապահովելու, մարդու իրավունքները ԵՄ ինստիտուտների և ԵՄ անդամ-երկրների կողմից ոտնահարվելու դեպքում՝ պաշտպանելու, անդամ պետությունների և ինստիտուտների միջև «հաշտարարի» գործառույթ իրականացնելու, ինչպես նաև ԵՄ իրավունքի կիրառման հետ կապված ԵՄ ինստիտուտների միջև ծագած վեճերը լուծելու իր առաքելությունը:

Միաժամանակ կարող ենք փաստել, որ Լիսաբոնի պայմանագրով ԵՄ դատարանն իր հերթին կոչված է նաև ծառայելու ինտեգրման շահերին: Այդ իսկ պատճառով՝ մոտ ապագայում նույնպես նրա համար առաջնային կմնան ԵՄ մարմինների և ինստիտուտների հեղինակության մասին հոգածությունը և ԵՄ իրավունքի որոշակիացումը:

Առանցքային հասկացություններ. *Եվրոպական իրավունք, Եվրոպական միություն, Անստերդամի պայմանագիր, Նիցցայի*

պայմանագիր, Հռչակագիր Եվրոպական միության ապագայի մասին, Լիսաբոնի պայմանագիր, Եվրոպական խորհրդարան, Եվրոպական խորհուրդ, ԵՄ Սահմանադրություն, Եվրոպական միության արդարադատության դատարան, Մարդու հիմնական իրավունքներ, «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. С. Ю. Кашкин, Право Европейского Союза, 3-е издание, переработанное и дополненное. М.: “Юрайт”, 2010. - 1119с.
2. Եվրոպական միություն՝ համապարփակ նկարագիր, -Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2006. - 568 էջ:
3. Damian Chalmers, Gareth Davies, Giorgio Monti, European Union Law, Cases and Materials, Second edition, Cambridge University Press, 2010, p. 869.
4. Л. М. Энтин, Европейское право, Право Европейского Союза и правовое обеспечение защиты прав человека. - М.: “Норма”, 2007.- 960с.
5. Ա. Շ. Հարությունյան, Եվրոպական միության իրավունքի հիմունքները, Երևան, «Տիգրան Մեծ», 2011, -317էջ:
6. Consolidated versions of the treaty on European Union and the treaty on the functioning of the European Union, Charter of fundamental rights of the European Union, Luxemburg, Publications Office of the European Union, 2010, 156p.
7. Court of Justice of the European Union <http://curia.europa.eu> - ԵՄ արդարադատության դատարանի պաշտոնական կայքէջ (մուտքի ամսաթիվը՝ 12.07.2011):
8. The Court of Justice, Composition, jurisdiction and procedurs, Luxembourg, December 2010 edition, Publications Office, 106p.
9. Ա.Հ. Երիցյան, Մարդու իրավունքներ. պատմատեսական, իրավափիլիսոփայական և իրավաբանական հիմնախնդիրները / գիտ. խմբագիր՝ Գ.Գ. Հարությունյան, - Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2011, - 424 էջ:
10. Лиссабонский договор: URL: <http://ru.wikipedia.org> (дата обращения: 10.07.2011).

А. А. АРУТЮНЯН

**ВОЗДЕЙСТВИЕ ЛИССАБОНСКОГО ДОГОВОРА НА
ИНСТИТУТЫ И СУДЕБНЫЕ ОРГАНЫ
ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА**

Резюме

В статье анализируется воздействие Лиссабонского договора на институты ЕС. Объектом исследования избран наиболее важные аспекты этого договора с целью сравнения его положений со статусом, оценки их влияния на институты ЕС и особенно на Европейский суд. Лиссабонский договор вносит изменения в Договор о ЕС в отношении институтов Союза. Европейский парламент обретает значительное дополнительное влияние за счет Комиссии ЕС и Совета, расширяются возможности национальных парламентов. Правосудие Союза выступает как единая судебная система. Важным аспектом является и то, что Европейский суд получил также юрисдикцию в области правосудия внутренних дел.

Ключевые понятия: *Лиссабонский договор, институты ЕС, Европейский суд, Европейский парламент, Комиссия ЕС, Совет ЕС, Президента Европейского Совета, Верховный представитель, Европейский Суд Правосудия, Суд общей инстанции, Специализированный суд.*

A. A. HARUTYUNYAN

**THE IMPACT OF THE TREATY OF LISBON ON THE
INSTITUTIONS OF THE EU AND ON THE EUROPEAN
COURT OF JUSTICE**

Summary

The article aims to study the most important aspects of the Treaty of Lisbon, by comparing its provisions with the status quo,

and assessing their impact on the institutions of the EU and especially on the European Court of Justice (ECJ). The European Parliament gains significant extra influence at the expense of the EU Commission and the EU Council. The European Parliament has a new obligation to elect the Chairman of the European Commission. One of the important aspects is that the opportunities of the national parliaments are enlarged. The Treaty's most important impact on the ECJ is that it will gain jurisdiction over the justice and home affairs' area.

Key concepts: *Treaty of Lisbon, European Court of Justice, European Parliament, EU Commission, EU Council, High Representative, Court of Justice of the European Union, Court of Justice, General Court, specialized courts.*

ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

Ռ. Մ. ԲՈՅԱԶՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական բարեփոխումները բացահայտեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնց թվին են պատկանում գիտելիքի առևտրայնացումը, այդ ընթացքում ծագած սոցիալական գործընթացների կառավարումն ու դրանց կարգավորումը:

Նորամուծական զարգացման ընթացքում յուրաքանչյուր նոր սերունդ ընդլայնում է իր ազդեցության ոլորտը երկրի սոցիալական կյանքում, որը, տեխնոլոգիական թարմացման հնարավորությունների հետ կապված, իր արտահայտությունն է գտնում մարդկանց կյանքի որակի բարձրացման գործընթացներում: Այս հիմնախնդիրը լայնորեն ուսումնասիրվում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյուններից, հրատապ հետազոտությունների առարկա է դարձել նորամուծական զարգացման ժամանակակից տեսությունների, սոցիալական և կառավարչական համակարգային փոփոխությունների վերաբերյալ տարբեր հայեցակարգերի մշակման համար: Սակայն սոցիալական տեսանկյունից նորամուծական գործունեությունը դեռևս բավարարչափով ուսումնասիրված չէ: Ներկայումս լայն տարածում է ըստացել այն տեսակետը, ըստ որի «նորամուծական գործունեությունը կարող է ներկայացվել որպես ստեղծագործության և նորության ստեղծման գործընթաց, որն ըստ էության իրացնում է նորամուծական տարբեր արժեքները, նորամուծական պահանջմունքները և ձեռնարկատիրական ջանքերը» [1,17]: Գոյություն ունեն մաս ալ մեկնաբանություններ, որոնց հեղինակները դիտարկում են «նորամուծություն» հասկացության բովանդակության առանձին կողմերն ու բնութագրերը: Ոմանք էլ, ուսումնասիրելով գիտական և ընդհանրապես մտավոր գործունեության երևույթը՝ ընդգծում են նորամուծության հոգևոր, ստեղծագործա-

կան բնույթը, այն ներկայացում որպես աշխատանքային գործունեության շարժառիթ, վարքի եղանակ, որը որակապես տարբերվում է նախկինում եղած նույնատիպ երևույթներից [1, 20]:

Նորամուծությունները ցանկացած տնտեսական համակարգի կարևորագույն տարրերից են, սակայն դրանց նշանակությունն անհամեմատ կարևորվում է ժամանակակից գիտելիքահենք տնտեսության պայմաններում: Ակնհայտ է, որ նորամուծական զարգացումն ապահովվում է առանձին մարդկանց, աշխատանքային թիմերի ու խմբերի ստեղծագործական ակտիվության շնորհիվ: Հետևաբար՝ դրանք այն մարդիկ են, ովքեր արժեքներ են ստեղծում՝ կյանքի կոչելով նոր գաղափարներ [2,172]: Ահա այդ սուբյեկտներն էլ ձևավորում և ներկայացնում են նորամուծական գործունեության սոցիալական միջավայրը:

Զարգացման այս փուլի կարևոր խնդիրներից է դառնում նաև նորամուծական զարգացմանը համարժեք որոշումներ կայացնելու ընդունակ մասնագետների գործունեության կարգավորումը: Այս իմաստով՝ ՀՀ-ում կա նորամուծական գործունեության սոցիալական որոշակի բազա: Ըստ 2011թ. հրապարակված տվյալների՝ ՀՀ-ում բնակչության 0,2%-ն ունի գիտական աստիճաններ և կոչումներ, գործում են 81 կազմակերպություններ, որոնք իրականացնում են գիտատեխնիկական աշխատանքներ, ու հենց դրանք էլ հիմնականում ստեղծում են նորամուծական գործունեության ապահովման ու դրա սոցիալական գծերի ձևավորման միջավայրը [3,190]: Եթե սրան ավելացնենք նաև պրակտիկ նորարարների մեծ թվաքանակը, ապա ակներև է դառնում, թե որքան լայն է նորամուծական գործունեության սոցիալական բազան*:

Նորամուծական զարգացման աշխատանքներում ընդգրկված մարդկանց կարելի է բաժանել երեք գործառութային թիմերի՝

1. Մարդիկ, որ մշտապես գտնվում են ուսման, գիտելիքների ձեռքբերման գործընթացում:

* Թեև նորամուծությունների (գյուտերի) մի զգալի մասը տարիներ շարունակ ինչ-ինչ պատճառներով չի հավաստագրվում, վիճակագրությունն էլ դրանց վերաբերյալ ստույգ տվյալներ չի ներկայացնում:

2. Մարդիկ, որոնք գտնվում են կազմակերպիչների դերում:
3. Մարդիկ, որոնք իրականացնում են ստեղծարար կառուցողական գործառույթ [4, 275]:

Հասարակական կյանքում շարքային մարդիկ, առավել ևս՝ մասնագետները, միշտ էլ կարևորել են երևույթները նոր ձևով տեսնելու հնարավորությունը: Այս իմաստով՝ նորամուծական թիմի մեջ առանձնանում են այն անհատները, որոնք ունակ են իրենց շրջապատող աշխարհը այլ կերպ տեսնելու, այլ կերպ դիտարկելու, բաց և ընկալունակ լինել այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում իրական կյանքում: Նոր գործունեությունը կարող է ընկալվել որպես անհատի յուրահատուկ ընդունակություն՝ տեսնելու այն, ինչ թերևս տեսնում են նաև ուրիշները, սակայն մտածում են բոլորովին այլ կերպ: Թիմի այդպիսի անդամը ձրգտում է բացահայտել գործերի իրական վիճակը՝ չհենվելով ձևավորված կարծրատիպերի և հին պատկերացումների վրա: Նրա աշխատանքում կարևոր են դառնում փորձարարությունը և ժամանակակից տեխնիկական միջոցների ակտիվ օգտագործումը:

Նորամուծական գործունեության մեջ կարևոր դեր ունի փոճարարը: Նա կարող է տաղանդավոր չլինել, բայց պարտավոր է լինել բանիմաց և աշխատասեր: Տնտեսական զարգացման ընթացքում եղել են դեպքեր, երբ բազմաթիվ փորձարկումներ անհաջողության են մատնվել, միայն որոշակի փուլում է հաջողվում հասնել փորձարարության ծրագրային նպատակներին: Հենց իրենք՝ փորձարարներն են խոստովանում, որ փորձարկումների համար լավագույն ժամանակը վրա է հասնում, երբ այլևս ոչինչ չկա կորցնելու: Մշակելով նախատիպը՝ փորձնական նմուշը, փորձարարը մշտապես ժամանակի պակաս է զգում: Ուստի և անհրաժեշտ է երբեմն, առանց մտավախության, պատվիրատուին առաջարկել «հում» նմուշներ: Դա արագացնում է նորամուծական գործընթացը, խթաններ է ստեղծում նոր գաղափարների շղթայական ռեակցիայի ձևավորման համար: Փորձարարը չպետք է անտեսի նաև այն իրողությունը, որ նույն փորձնական նմուշի, ինչպես նաև առաջակվող ծառայության հաջող օգտագործումը տվյալ ֆիրմայի գլխամասային գրա-

սենյակում, դեռևս չի նշանակում դրա կիրառման անվերապահ հաջողություն նրա մասնաճյուղերում: Պահանջվում է փորձնական մմուշի կամ ծառայության ներդրման որոշակի տեղայնացում կամ դրա օգտագործման ընթացքում որոշակի ճկունություն, այսինքն՝ անհրաժեշտ են լինում որոշակի փորձարարական տարրեր տվյալ ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրինակ՝ հայտնի ֆիրմայի պլազմային հարթ էկրանով մեծ անկյունագծով հեռուստացույցների վաճառքը լավ չէր ընթանում [5, 25]: Ուսումնասիրությունները պարզեցին, որ դրա պատճառը ոչ թե ապրանքի համեմատաբար բարձր գինն է եղել, այլ այն, որ սպառողները կարծել են, թե այդ նոր մոդելը ոչ հարմար չափի տեղ կարող է գրադեցնել պատի վրա: Անմիջապես յուրահատուկ լուծում գտնվեց. գովազդի նպատակով, թղթի վրա ներկայացվեց այդ հեռուստացույցի լիաչափ լուսանկարը: Այն միանգամայն հարմար էր պատին փակցնելու համար, և միաժամանակ հնարավորություն էր ընձեռում պարզելու այն հարցը, թե սենյակի հատկապես որ մասն է առավել հարմար՝ տեղադրելու տվյալ հեռուստացույցը:

Ինչպես ցույց է տալիս փորձը, պետք չէ հաճախորդին առաջարկել միշտ մեկ նախատիպ ու դրանով իսկ նրան դնել դժվար կացության մեջ: Որքան շատ լինեն նախատիպերը, այնքան մեծ կլինեն հաճախորդի ընտրության հնարավորությունները: Ընդ որում՝ դրանք պետք է լինեն պարզ և ոչ թանկարժեք: Փորձը վկայում է նաև, որ անհրաժեշտ է պարբերաբար դուրս գալ արդեն «հղկված ու ձևավորված» հունից, քանի որ յուրաքանչյուր անգամ այնտեղ կգտնվի մի ինչ-որ նոր բան: Որոնումների այսպիսի գործընթացը ընդունված է անվանել «խաչաձև փոշոտում» [4, 34]: Պատմությանը հայտնի են այդ գործընթացի նորամուծական ներուժի դրսևորման բազմաթիվ օրինակներ: Նշենք դրանցից ընդամենը մեկը, այն է՝ վերոհիշյալ գործընթացի օգնությամբ դաշնամուրի ստեղնաշարը «գրամեքենայի ձևափոխելու» նորամուծությունը:

«Խաչաձև փոշոտման» մեթոդի կիրառման պարագայում կարևորն այն է, որ խնդրի իրականացումն ունենա սիներգետիկ

արդյունք: Այդ նպատակով՝ աշխատանքային թիմերում անհրաժեշտ է ընդգրկել այնպիսի մասնագետների, որոնք իրենց մասնագիտացումների ոլորտներում ունեն լայն մտահորիզոն և բարձր որակավորում: Մասնագետների հետ տարվող աշխատանքը կարող է իրականացվել «բումերանգի սկզբունքով»: Մարդիկ բիզնեսում կամ որևէ այլ ոլորտում հասնելով որոշակի հաջողությունների, հաճախ կարծում են, թե գտնվում են իրենց նվաճումների բարձրակետում, և այլևս ոչինչ ավելացնելու կամ փոխելու տեղ չկա: Այս թեզով առաջնորդվելու դեպքում գործարարը վաղ թե ուշ դատապարտվելու է անհաջողության: Մինչդեռ ելքը միանգամայն պարզ է և որոշակի՝ փնտրել նոր գաղափարներ, կիրառել նոր գործիքներ, հետևողականորեն առաջ գնալ նորամուծական գործունեության ճանապարհով: Օգտագործելով «խաչաձև փոշոտման» մեթոդը ապրանքների և ծառայությունների սեփական արտադրություն կազմակերպելու նպատակով՝ անհրաժեշտ է շարունակաբար օգտվել արտերկրի ուսանելի փորձից, փորձառություն ձեռք բերել առաջատար ֆիրմաներում և կազմակերպություններում, ժամանակին կյանքի կոչել նորամուծությունները և, որ չափազանց կարևոր է, սեփական գուծունեության ոլորտում լինել նորամուծությունների ակտիվ սուբյեկտ:

Նորամուծությունների տարածման ու դրանց օգտագործման մասշտաբների ընդլայնումը խթանելու բացառիկ կարևոր նշանակություն են ստանում դրանց հեղինակների անձնային այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ նրանց քաղաքացիական դիրքորոշումը, անշահախնդրությունը, մարդասիրությունը, մեծահոգությունն ու բարեպաշտությունը: Դրա հանրահայտ ապացույցներից է մեքենաների անվտանգության գոտիների հայտնագործության հեղինակ Ն. Բոլինի գործունեությունը, երբ նա իր նորամուծությունը չարտոնագրեց սեփական Volvo ընկերությունում՝ դրանով իսկ մեծապես նպաստելով դրանց անարգել տարածմանն ու ներդրմանը, միլիոնավոր մարդկանց կյանքի ու անվտանգության պահպանությանը [3, 44]:

Նորամուծական գործունեության մեջ հաճախ անհրա-

Ժեշտ է դառնում հաղթահարել բյուրոկրատական տարբեր խոչընդոտներ, ինչպես նաև փնտրել ֆինանսավորման ոչ ավանդական աղբյուրներ: Այդպիսի դժվարությունները որպես կանոն կապված են ապագա նորամուծությունների մշակման մոտեցումները վերանայելու անհրաժեշտության հետ: Օրինակ՝ ծրագրային ապահովման սպասարկմանը ծառայող սարքավորումները որոշակի պարբերականությամբ ենթակա են փոխարինման՝ ծրագրային ապահովման նոր համակարգերի կամ նոր տեխնոլոգիաների կիրառման պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Սա վերաբերում է նաև համացանցում տպագիր արտադրանքի՝ ամսագրերի և թերթի արտապատկերման խնդրին: Ուսումնասիրելով այս խնդիրը՝ առաջարկվեց ծրագիր ցանկացած չափի էկրանի համար: Իհարկե, երբեմն նորամուծության իրացումը կարող է արհեստականորեն ձգձգվել այնքան ժամանակ, մինչև գոյություն ունեցող ֆինանսատար և հնացած կառույցները նորերով փոխարինվեն:

Նորամուծական գործունեության մեջ գործակցության արդյունավետությունը մեծապես կախված է նաև գործընթացը գլխավորող մարդկանց պրոֆեսիոնալ պատրաստվածությունից, ստեղծարար մտածողության մակարդակից և որ կարևորն է՝ գործակցության կազմակերպման կարողությունից և հմտությունից: Այս առումով՝ մասնագետների շարունակական կրթության ապահովումը և նպատակային խորհրդատվության կազմակերպումը բացառիկ նշանակություն են ստանում նոր տիպի տնտեսության և մրցակցային հարաբերությունների համակարգում:

Խորհրդատվության գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընկերության և նրա անձնակազմը ներկայացնող մարդկանց համատեղ գործակցային աշխատանքի արդյունավետության ապահովումն առավել հեռանկարային է և բացառիկ շահավետ, քան սեփական գաղափարները պատվիրատուին առաջարկելը: Խորհրդատվական ֆիրմայի ներդրումը հաճախորդի ներդրումից դժվարությամբ տարբերելու դեպքում միայն կարելի է անել հետևություն, որ աշխատանքը ճիշտ ուղղությամբ է ընթանում: Համագործակցության կազմակերպման իդեալա-

կան նախատիպ է ֆուտբոլը՝ որպես թիմային խաղ, որտեղ չի կարելի հաջողության հասնել՝ առանց ամբողջ թիմը կազմող մարդկանց ներդաշնակ փոխգործակցության:

Յուրաքանչյուր նորամուծական ծրագրի հիմնական շարժիչ ուժը ձեռներեցն է, նրա նախաձեռնությունը, աշխատանքային խմբերում դերերի ճիշտ բաշխման ունակությունը, նորամուծական գործընթացի տարբեր փուլերում կառավարման, ճիշտ ժամանակին փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ծագած հնարավորությունները ճիշտ գնահատելու ունակությունը: Փորձը ցույց է տալիս, որ ձեռնարկատիրական հաջողությունը կախված չէ ո՛չ գործարարի տարիքից, ո՛չ նրա բազային կրթությունից, ո՛չ էլ սոցիալական վիճակից: Յուրաքանչյուրին է տրված հաջողության հնարավորությունն զգալու և գիտակցելու: Հաշվի առնելով ռիսկի գործոնը՝ անհրաժեշտ է հնարավորինս ճիշտ կողմնորոշվել ու չվախենալ հնարավոր ձախողումներից, քանի որ շատ հաճախ, որքան էլ զարմանալի է, ձախողումները և նույնիսկ դրանց պարբերաբար կրկնվելն ի վերջո հարթում են հաջողության հասնելու ճանապարհը: Ինչպես վկայում է փորձը, յուրաքանչյուր հաջողված, բարձր ռիսկային ծրագիր, որպես կանոն, հաճախակի հայտնվել է կործանման եզրին, սակայն ծրագիրն, այնուամենայնիվ, ի վերջո կյանքի է կոչվել հմուտ, նորամուծական կառավարման շնորհիվ:

Նոր ընկերությունների հաջողության վճռական գործոնները միշտ էլ այն մարդիկ են, ովքեր ղեկավարում են ընկերությունը, ձևակերպում ընկերության ռազմավարությունը, հիմնական նպատակները, թիրախներն ու դրանց հասնելու հիմնական ուղիները, որոշում ընթացիկ գործունեության բովանդակությունը և, վերջին հաշվով, պատասխանատվություն կրում նախանշված խնդիրների իրականացման համար: Կարծում ենք՝ ղեկավարի առավել կարևոր հատկանիշը պետք է լինի ստեղծագործող անհատների թիմը ղեկավարելու ունակությունը, ով, ըստ արժանվույն գնահատվելով թիմի անդամների կողմից, կստանձնի առաջնորդի դերը թիմում: Այդ դերը բարդ է և բազմակողմ: Որպեսզի այն հաջողությամբ իրականացվի, ղեկավարը, բացի

վերը նշված հատկանիշներից, նաև պետք է ունենա արագ որոշումներ կայացնելու ունակություն, օժտված լինի նորամուծական մտածողությամբ և տիրապետի նոր գիտելիքների անհրաժեշտ պաշարի, կարողանա ամուր կապեր հաստատել նպատակային կամ նոր ձևավորվող շուկայի մասնակիցների հետ: Նորամուծական գործունեության հարցերով զբաղվող մասնագետը կամ ղեկավարն անհրաժեշտորեն պետք է ունենա՝

- մասնագիտական որակյալ կրթություն և աշխատանքային հարուստ փորձ.
- կուռ տրամաբանություն.
- թափանցիկ գործելակերպ.
- աշխատասիրություն.
- ազնվություն.
- թիմ ձևավորելու ունակություն.
- լարված աշխատանքային գրաֆիկին «դիմանալու» ունակություն.
- գործընկերներին, ինչպես նաև այլ անձանց լսելու բարձր կուլտուրա.
- նոր նախագծերը շահագրգիռ ձևով քննարկելու և գնահատելու կարողություն.
- դժվար, ինչպես ընդունված է ասել՝ «ուժերից վեր» խնդիրները լուծելու և աշխատանքին նպատակներին հասնելու կամք ու հետևողականություն.
- ձեռքի տակ եղած միջոցներն ու հնարավորություններն առավել նպատակային և արդյունավետ օգտագործելու կարողություններ ու հմտություններ:

Այդպիսի ղեկավարի և աշխատակիցների միջև գործնական սերտ հարաբերություններն ու շփումները բարենպաստ միջավայր են ստեղծում փոխվստահության համար, էապես նպաստում են կայացվող որոշումների և նախաձեռնությունների հաջողությանը: Կարևոր է ձևավորել այնպիսի թիմ, որը գործնականորեն ընդունակ կլինի արդյունավետ գործունեություն ծավալելու միայն ղեկավարի կողմից անհրաժեշտ նվազագույն ցուցումների պարագայում: Այդպիսի թիմում ղեկավարի հիմնական գոր-

ծիքն է դառնում «ուղեղային գրոհը»: «Միասին աշխատելով՝ մարդիկ ստեղծում են ավելի մեծ բան, քան նրանց անհատական մտավոր ջանքերի ամբողջության շնորհիվ: Չարգացած կազմակերպությունները կենտրոնացնում, վերամշակում և մաքրում են գիտելիքները» [4, 276]: Մարդիկ հիմանխնդիրները լուծում են՝ օգտագործելով «ուղեղային գրոհը», ստեղծագործական ուժերն ու գիտելիքները, որոնք նրանք ձեռք են բերում կուտակված փորձից: Համատեղ աշխատանքը բազմապատկում է մարդկանց գիտելիքները, որ կուտակվել են կազմակերպության գործունեության արդյունքում, և միաժամանակ ավելի են ընդլայնվում ապագա հաջողության ձեռքբերման պայմանները բարելավելու իրական հնարավորությունները:

ՀՀ տնտեսության մեջ և մասնավորապես առանձին ընկերություններում կարևոր է դառնում նորամուծական գիտելիքների սոցիալական ուղղվածության կառավարումը, որովհետև ձեռնարկատիրական ցանկացած ոլորտում առկա է որոշակի տեղեկատվական բաղկացուցիչ, ընկերությունների ղեկավարներն ու աշխատակիցները գերբեռնված են տեղեկատվությամբ, աշխատակիցները զգալի աշխատաժամանակ են ծախսում անհրաժեշտ տեղեկատվության որոնման և անհրաժեշտ գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման նպատակով իրականացվող շփումների վրա: Ընկերությունից հեռացող աշխատակիցների հետ միաժամանակ «կորչում են» նաև նրանց փորձն ու գիտելիքները: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է պահապանել աշխատակիցների ոչ միայն ձևակերպված (փաստաթղթավորված), այլև դեռևս չձևակերպված գիտելիքները: Սուր անհրաժեշտություն է զգացվում արդյունավետ և հմտորեն կառավարելու հաճախորդների ու գործընկերների վերաբերյալ տեղեկատվական հոսքերն ու գիտելիքները:

Ցանկացած ընկերության համար, անկախ նրա մեծությունից, հավելյալ արժեքի ստեղծման աղբյուր է ծառայում կուտակված փորձի որակը, վերջինիս «պիտանիությունը» ձեռնարկության առջև ծառայած արդիական, բարդ արտադրական և կազմակերպչական խնդիրներ լուծելու գործում: Հետևաբար՝

փորձը գործնականում մասնագետի ձեռք բերած այն ունակություն է, որի շնորհիվ նա ընդունակ է դառնում գործունեություն իրականացնելու որոշակի ոլորտում, հնարավորինս արագ ու որակով լուծելու տիպային և ոչ ստանդարտ խնդիրները: Նորամուծության զարգացումը, նրա սոցիալական ուղղվածության խորացումը անմիջականորեն կախվածության մեջ են գտնվում գիտելիքի, ունակությունների, հմտությունների և փորձի ինտեգրվածության աստիճանից:

Այսպիսով՝ նորամուծական գործունեության կառավարման մեջ սոցիալական բաղադրիչը բացառիկ կարևոր դեր է կատարում: Սոցիալական միջավայրը ձևավորում է նորամուծական գործունեության հիմքերն ու աղբյուրները, նախադրյալներն ու նպատակները: Այս միջավայրում «աշխատում են» բազմաթիվ սոցիալական գործոններ, որոնք մեծ ազդեցություն են թողնում նորամուծական գործունեության արդյունքների վրա:

ՀՀ-ում ազգային նորամուծական տնտեսության ձևավորումը դարձել է հույժ անհրաժեշտություն: Այս նպատակով՝ վերլուծվել են նորամուծական գործունեության որոշակի կողմեր, շեշտադրվել են ոլորտի մի քանի հիմնահարցեր, և փորձ է արվել բացահայտելու նորամուծությունների հրատապությունն ու սոցիալական ուղղվածության ապահովման կարևորությունը գիտելիքահենք տնտեսության ստեղծման գործընթացում: Նորամուծական գործունեությունը դիտարկվել է որպես ստեղծագործական գործընթաց, որում շարժիչ ուժի դեր է կատարում ձեռնարկատերը: Պարզաբանվել են նորամուծությունների հոգևոր, ստեղծագործական ու սոցիալական կողմերը և կարևորվել դրանց արդյունավետ կառավարումը: Ներկայացվել են նորամուծական գործունեության ոլորտում գործակցության ժամանակակից ձևերն ու մեթոդները: Պարտադիր է համարվել՝ նորամուծական գիտելիքների սոցիալական ուղղվածության կարգավորումը ՀՀ ամբողջ տնտեսության մեջ և դրա առանձին օղակներում:

Առանցքային հասկացություններ. *նորամուծություն, նորամու-*

ծախան գործունեություն, սոցիալական փորձարար, նորամուծական թիւ, գիտելիք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Инновационный менеджмент/ Под.ред. Л.Н. Оголевой, -М.: Информ-М, 2001. - 464с.
2. Питер Ф. Друкер. Бизнес и инновации, -М.: ООО “И.Д. Вилиамс”, 2007.- 432с.
3. ՀՀ սոցիալական վիճակը 2010թ-ին: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2011. - 388 էջ:
4. Kelley T. with Littman J. The ten faces of Innovation. Strategies for heightening Creativity. IDEO’s Strategies for Beating the Devil’s Advocate & Driving Creativity throughout Your Organization. L.: Profile Books LTD, 2006.-354 p.
5. Такер Роберт Б., Инновации как формула роста. Новое будущее ведущих компаний/Пер.с англ.-М.:ЗАО “Олимп-Бизнес”, 2006.- 240 с.

Ր.Մ. БОЯДЖЯՆ

СОЦИАЛЬНОЕ ИЗМЕРЕНИЕ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Резюме

Формирование национальной инновационной экономики в РА стало необходимостью. С этой целью были проанализированы и исследованы отдельные стороны инновационной деятельности, подчеркнуты некоторые проблемы этой сферы, определена ее социальная направленность. Инновационная деятельность рассматривается как творческий процесс, в котором предприниматель играет роль движущей силы. Были выявлены духовные, творческие и социальные стороны инноваций, опреде-

лена значимость их эффективного управления, представлены современные формы и методы сотрудничества в инновационной деятельности. В экономике РА и в ее разных областях необходимым считается регулирование социальных аспектов инновационных знаний.

Ключевые понятия: *инновация, инновационная деятельность, социальный тестировщик, инновационная команда, знание.*

R.M. BOYAJYAN

THE SOCIAL MEASURING OF INNOVATIVE ACTIVITY

Summary

The formation of national innovative economy has become a necessity in the RA. For this purpose some aspects of innovative activity were analyzed and studied, some issues of this sphere were highlighted and the social orientation of the innovations was defined. Innovative activity has been considered a creative process, in which the entrepreneur plays the key role. The spiritual, creative, and social aspects of innovations were identified and their effective management was prioritized. Modern forms and methods of innovative cooperation were presented. Regulation of social aspects of innovative knowledge is considered mandatory in the RA economy and in its various sectors.

Key concepts: *innovation, innovative activity, social tester, innovative group, knowledge.*

АНАЛИЗ ВЕНЧУРНОГО ИНВЕСТИРОВАНИЯ НА ОСНОВЕ РЕАЛЬНЫХ ОПЦИОНОВ

Э. В. КАРСЛЯН, Н. Ю. СИМОНЯНЦ

Понятие венчурного инвестирования. Существует множество определений того, что такое венчурное инвестирование, но все они так или иначе сводятся к его функциональной задаче: способствовать росту конкретного бизнеса путем предоставления определенной суммы денежных средств в обмен на долю в уставном капитале или некий пакет акций [1;3;4].

Венчурный капиталист, стоящий во главе фонда или компании, не вкладывает собственные средства в компании, акции которых он приобретает, т.е. является посредником между синдицированными (коллективными) инвесторами и предпринимателями. В этом заключается одна из самых принципиальных особенностей этого типа инвестирования. С одной стороны, венчурный капиталист самостоятельно принимает решение о выборе того или иного объекта для внесения инвестиций, участвует в работе совета директоров и всячески способствует росту и расширению бизнеса этой компании, с другой – окончательное решение о производстве инвестиций принимает инвестиционный комитет, представляющий интересы инвесторов. В конечном итоге получаемая венчурным инвестором прибыль принадлежит только инвесторам, а не ему лично. Он имеет право рассчитывать только на часть этой прибыли.

Так как для прибыльной реализации инвестиций, вложенных в венчурные предприятия, необходим выход новой высокотехнологичной компании на фондовый рынок для продажи акций, владелец вложенных в компанию средств интересуется не дивидендами, а приростом самого капитала. Обычно венчурные капиталисты, вкладывая средства в венчурные предприятия, хотят увеличить свой капитал не менее чем в 5-10 раз за 7 лет [3]. И весь этот период, вложенный в компанию венчурный капитал неликвиден, а реальная величина прибыли становится

известной только после выхода предприятия на фондовый рынок, когда инвесторы венчурного капитала получают доход за счет продажи своего пакета акций желающим за сумму, существенно превышающую объем первоначально вложенных в компанию средств.

Исходя из характера венчурного предпринимательства, практически любая инвестиция в любой этап развития новых компаний является высокорисковой финансовой операцией, степень риска которой в сочетании со смелостью и умением ждать, может быть компенсирована только высокой рентабельностью проинвестированной высокотехнологичной компании на поздних этапах ее развития.

И несмотря на то, что по своей природе венчурное инвестирование непременно связано с риском, именно чрезмерный риск финансирования неизвестной компании является самым существенным лимитирующим фактором для потенциального инвестора, раздумывающего, куда бы повыгодней вложить свободные деньги: купить акции нефтяной компании, вложить деньги в новую компанию, разрабатывающую технологию завтрашнего дня, что заведомо рискованно, или положить деньги в банк под пусть низкий, но гарантированный процент.

Поэтому вполне правомерен вывод: венчурное финансирование будет всегда привлекательно для тех, кто готов к высокой степени риска, начальной неликвидности активов компании и длительному «замораживанию» идеи в жизнь, удовлетворения новых потребностей общества и последующего негарантированного получения сверхприбылей.

Таким образом, венчурное инвестирование - это своеобразный вид инвестирования средств в новые высокотехнологичные компании для обеспечения их становления, роста и развития с целью получения прибыли в случае успешной реализации проекта. То есть это высокорисковое вкладывание частного капитала в высокотехнологичные малые компании, способные в перспективе производить пользующиеся высоким

спросом наукоемкие продукты или услуги. В этом контексте трактовка венчурного инвестирования с точки зрения реальных опционов является перспективной.

Типы реальных опционов. Исторически термин «реальные опционы» возник после того, как была разработана методология применения теории финансовых опционов Блэка-Шоулза к реальным активам [2;5]. Реальный опцион- это опцион, базовым активом по которому являются реальные активы: заводы, запасы нефти, машины, программное обеспечение, производственные инвестиции и т.д.

В узком смысле о реальных опционах говорят как о приложении теории финансовых опционов к реальным активам, рассматривая это как определение. В общем же случае реальные опционы являются объективно существующим универсальным управленческим процессом, эквивалентным понятию стратегии в ее динамике, которым необходимо научиться осознанно управлять. Если мы не замечаем реальные опционы, то мы не только теряем альтернативную прибыль, но и несем прямые издержки.

Для проектирования и анализа реальных опционов полезным являются несколько классификаций, а именно:

➤ **Классификация по предпринимаемому действию:**

- Последовательные инвестиции.
- Опцион роста.
- Опцион на прекращение.
- Ожидание и обучение.
- Варьирование объемами и разнообразием продукции.

➤ **Классификация по типу неопределенности:**

- Радужный опцион.

➤ **Комбинации опционов:**

- Опционы переключения.
- Составные опционы.

➤ **Классификация по стороне баланса:**

- Опционы, встроенные в активы.

- Опционы, встроенные в пассивы.
Прокомментируем кратко эти классификации.

Последовательные инвестиции представляют собой серию взаимосвязанных проектов, осуществляемых последовательно. При этом предполагается, что каждый предыдущий проект создает необходимую среду (внутреннюю и внешнюю) для проведения следующего. Решение о каждом следующем проекте обладает гибкостью: мы можем выбрать подходящий момент для его начала, а также можем навсегда отказаться от реализации. Важным примером последовательных инвестиций является одна из стратегий проникновения инвестиционной компании на новый для нее рынок. Вложение индивида в многоступенчатое образование (школа-университет-аспирантура) является другим примером последовательных инвестиций. Индивид может закончить образование на любой стадии и отложить поступление в аспирантуру.

Часто отдельно выделяют как специальный вид последовательных инвестиций проекты, называемые *стратегическими инвестициями* или *стратегическими опционами*. При этом имеются в виду проекты, которые не следует принимать по существующим методикам, т.е. имеющим нулевую или отрицательную чистую приведенную стоимость (NPV-Net Present Value). Конечно, такие проекты предполагают последующие, осуществление которых зависит от первоначального проекта и которые, как ожидается, будут уже прибыльны.

К стратегическим опционам примыкают так называемые *опционы роста*, где речь идет об инвестициях с целью входа на крайне непредсказуемый страновой или отраслевой рынок, где возможны сверхприбыли.

Опцион на прекращение проекта требует пояснения. Инвестор всегда может прекратить проект, смирившись с безвозвратными потерями. Опцион на прекращение означает проектирование стратегии так, чтобы ситуация была несимметричной: данной фирме проект не выгоден, но есть фирмы, для которых

этот проект или что-то связанное с ним (не нужен завод, но нужна земля, на которой он расположен) выгодны. В этом случае удастся спасти хотя бы часть капиталовложений.

Многочислены примеры *опционов ожидания и обучения*. *Варьирование объемом и разнообразием продукции*, как в большую, так и в меньшую сторону, является важной гибкостью, которую надо специально встраивать в технологию.

Радужным называется опцион, зависящий от нескольких видов неопределенности. Теоретически все опционы являются радужными, но всегда целесообразно постараться выделить основной вид неопределенности, влияющий на задачу.

Составным называется опцион, который имеет в качестве базисной неопределенности другой опцион. Если подходить к вопросу очень строго, то почти все опционы являются составными.

В заключение нельзя не упомянуть, что стратегия обычно разрабатывается как *портфель реальных опционов*. При этом в портфеле, как и полагается, используется идея диверсификации рисков. Различные реальные опционы соответствуют различным продуктовым линиям, технологиям (более общим образом – ключевым компетенциям компании и видам ресурсов), сегментам потребителей.

Структура венчурного инвестирования. Далее наше внимание фокусируется на шести аспектах процесса, которые использует венчурный капиталист при выборе и структурировании инвестиций, а именно: инвестиционная стратегия, поток инвестиционных возможностей, скрининг, эффективный менеджмент, оценивание и инвестиционная структура [2;5].

- **Инвестиционная стратегия.** Инвестиционная стратегия является сердцевиной венчурной фирмы. Стратегия фокусируется на инвестиционной деятельности в отношении отрасли, стадии разработки, размера финансирования и географического региона. Инвестиционная стратегия должна быть достаточно гибкой для того, чтобы воспользоваться преимуществом создан-

ных рынком возможностей. Имеются существенные факты, что при успешных инвестиционных решениях в условиях высокой неопределенности инвестиционная стратегия учитывает все эти факторы и может помочь снизить инвестиционные риски. Ключевым вопросом здесь является то, что изменят ли менеджеры свои инвестиционные стратегии при наличии реальных опционов, и как реальные опционы в конечном счете окажут воздействие на их поведение при принятии инвестиционных решений.

- **Поток инвестиционных возможностей.** Поток инвестиционных возможностей генерируется венчурной фирмой. Этот аспект является важным, поскольку благодаря этому происходит дифференцирование венчурных фирм. Маркетинговые усилия венчурных фирм для генерирования потоков инвестиционных возможностей обеспечивают их широким выбором возможностей инвестирования.

- **Скрининг.** Целью скрининга является эффективное фокусирование ресурсов венчурного капиталиста таким образом, чтобы он смог быстро идентифицировать возможности, понять факторы риска инвестиционной перспективы и оценить потенциал доходов. Скрининг обычно концентрируется на том, как деятельность фирмы соответствует общей стратегии, воспринимаемому потенциалу и источнику деятельности. Особое внимание должно быть уделено источникам, которые указывают на высокоэффективный опыт деятельности в прошлом.

- **Эффективный менеджмент.** Процесс эффективного менеджмента обеспечивает ясное понимание бизнес-модели и основных включенных факторов риска. Но наиболее важным является то, что эффективный менеджмент является началом взаимоотношений с командой менеджмента компании. Процесс эффективного менеджмента является сложным: он включает гибкость взаимоотношений с менеджментом компании, отзывы покупателей, анализ третьей стороны, личные рекомендации и правовые аспекты.

- **Оценивание.** На всем протяжении осуществления эффективного менеджмента процесс оценивания является предметом рассмотрения и обсуждения. Важными аспектами, влияющими на оценивание, являются, например, стадия развития компании, оценивание сравнимых отраслей, финансовая история компании, уровень ее роста и доходность.

- **Инвестиционная структура.** Инвестиционная структура создает основу для формулирования целей как для венчурного капиталиста, так и для предпринимателя. Инвестиционная структура должна создавать баланс между ожидаемой доходностью и предполагаемым риском посредством оценивания, инвестиционной гарантированности, договоренностей и взаимоотношений.

Заключение. Первостепенной проблемой для венчурных капиталистов является принятие ими инвестиционного решения. Менеджеры обращаются к новым подходам, которые акцентируют опционное мышление, управленческую гибкость и ресурсы гибкости.

Резюме. В данной статье обосновывается важность присутствия реальных опционов в ситуациях принятия инвестиционных решений, а также - каким образом реальные опционы влияют на инвестиционные решения венчурных капиталистов.

Ключевые понятия: *венчурный капитал, венчурное инвестирование, инвестиционная стратегия, реальные опционы, эффективный менеджмент.*

ЛИТЕРАТУРА

1. **Экономика** и право. Энциклопедический словарь Габлера /Под редакцией А. П. Горкина, Н. Л. Тумановой, Н. Н. Шаповаловой, Ю. Б. Якутина. – М.: Изд-во «Большая Российская Энциклопедия», 1998, 430с.
2. **Copeland, T., Antikarov, V.**(2003) Real Options, Thomson, 370 p.
3. **Hellmann, T., Puri, M.** (2000). The Interaction between Pro-

- duct Market and Financing Strategy: The Role of Venture Capital.- Review of Financial Studies 13(4):959-984. 146 p.
4. **Kaplan, S.N., Stromberg, P.** (2003) Financial Contracting Theory Meets the Real World: An Empirical Analysis of Venture Capital Contracts- Review of Economic Studies Vol.70 pp. 281-315.
 5. **Trigeorgis, L.** (1996). Real Options: Managers Flexibility and Strategy in Resource Allocation. Cambridge, MA: MIT press, chapter 9.

Է. Վ. ՂԱՐՍԼՅԱՆ, Ն. Յու. ՄԻՄՈՆՅԱՆՑ

**ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՆԵՐՂՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆ ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ**

Ամփոփում

Հոդվածում արծարծվում է այն հարցը, թե ինչպես են իրականացվում վենչուրային կապիտալի ներդրումը և ֆինանսավորումը: Հիմնավորվում են վենչուրային կապիտալի ներդրման վերլուծության համար անհրաժեշտ կորպորատիվ ֆինանսների տեսության և իրական օպցիոնների մեթոդաբանական մոտեցումների կիրառելիությունն ու օգտավետությունը: Հետազոտվում է նաև ներդրումային որոշումների կայացման վարքագծի փոփոխությունն իրական օպցիոնների առկայության և բացակայության պայմաններում:

Առանցքային հասկացություններ. *վենչուրային կապիտալ, վենչուրային ներդրում, ներդրումային ռազմավարություն, իրական օպցիոններ, արդյունավետ կառավարում:*

E. V. KARSLIAN, N. Yu. SIMONYANTS

**VENTURE CAPITAL INVESTMENT ANALYSIS ON THE
BASIS OF REAL OPTIONS**

Summary

The aim of the article is to describe how venture capitalists make financing and investment decisions. The emphasis is on the methodological approach and the usefulness of corporate finance theory and real options in venture capital setting. This paper describes and illustrates a methodology to understand the behavior change of investment decision-making with and without the presence of real options.

Key concepts: *venture capital, venture investment, investment strategy, real options, effective management.*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՀ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱՃՔՈՒՄ**

Գ. Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ընդհանուր շուկայի շրջանակում «մրցակցային միջավայրի» կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մրցակցությունը շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության բաղկացուցիչ տարր է: Եվրոպական համագործակցությունն իր գոյության ընթացքում շոշափելի դրական արդյունքների է հասել եվրոպական ապրանքային շուկաներում մրցակցային իրավունքի ամրագրված նորմերի արդյունավետ կիրառման շնորհիվ:

Դրա հետ միասին հարկավոր է հաշվի առնել այն, որ մրցակցության պաշտպանությունը վերաբերում է տնտեսության մեջ պետական միջամտությանը: Վերջինիս արդյունավետության հարցը տասնամյակներ շարունակ բանավեճի առարկա է եղել տնտեսագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչների միջև: Տնտեսության մեջ պետական միջամտությունը քննադատվում է հատկապես նոր դասականների կողմից (Կ.Վեկսել, Ի.Ֆիշեր, Ա.Պիգու և ուրիշներ): Խնդիրն այն է, որ հարկավոր է հնարավորինս նվազեցնել վերազգային հակամենաշնորհային կարգավորման հետ կապված բացասական հետևանքները՝ ապահովելով ոչ միայն մրցակցության արդյունավետ պաշտպանությունը, այլև Եվրամիության և յուրաքանչյուր անդամ-երկրի ներդաշնակ զարգացումը:

Եվրամիությունում մրցակցության կարգավորման սկզբունքային բազմաթիվ նորմերի կիրառումն սկսվել է դեռևս 1951 թվականի ապրիլի 18-ին Փարիզում ստորագրված «Զարածխի և պողպատի եվրոպական միավորում հիմնադրելու մասին» պայմանագրում: Այդ պայմանագիրը կնքվել էր 50 տարով և նախատեսում էր համեմատաբար նեղ մասնագիտացված միջազգային կազմակերպության ստեղծում, որի հիմնական գործունու-

թյունը Եվրոպայում քարածխի և պողպատի ընդհանուր շուկայի ձևավորումը և դրա գործունեության ապահովումն էր: Ըստ էության, Փարիզյան պայմանագիրը եվրոպական տնտեսական ինտեգրման գաղափարի գործնական իրացման առաջին փորձարկումն էր լինելու: Դրա շրջանակում ձևավորվեցին առաջին ինստիտուտները, որոնց հիման վրա փորձարկվեցին եվրոպական ինտեգրման հիմքում ընկած սկզբունքները: Պայմանագրի հոդվածների որոշ մասը նվիրված էր մրցակցության կարգավորման հարցերին: Օրինակ՝ 5-րդ գլուխը (հոդվածներ 60-64) նվիրված էր շուկայի մենաշնորհացմանը հանգեցնող գների ժամանակավոր կամ տեղային իջեցմանը, գնորդների նկատմամբ (հատկապես ազգային) խտրական պայմանների կիրառման արգելմանը: Պայմանագրի վեցերորդ գլխում (հոդվածներ 65-66) ամրագրված էին համաձայնությունների և տնտեսական համակենտրոնացումների կարգավորմանը վերաբերող, իսկ յոթերորդ գլխում՝ մրցակցային հարաբերություններին պետական միջամտությանն առնչվող դրույթներ [1]:

Եվրամիության ներկայիս մրցակցային քաղաքականության խնդիրները բխում են «Եվրոպական տնտեսական համագործակցություն ստեղծելու մասին» 1957 թվականի մարտի 25-ին Հռոմում ստորագրված պայմանագրի դրույթներից: Դրա հիմքում դրվեցին Փարիզյան պայմանագրի սկզբունքները: Եվրոպական տնտեսական համագործակցության, իսկ 1993 թվականի նոյեմբերի 1-ից՝ նաև Եվրամիության գործունեության նրպատակն է՝ ընդհանուր շուկայի ստեղծման և մասնակից երկրների տնտեսական քաղաքականությունների մերձեցման ուղիով նպաստել ամբողջ Համագործակցությունում տնտեսական գործունեության ներդաշնակ զարգացմանը (Հոդված 2) [2]: Ելնելով այդ նպատակից՝ Համագործակցության գործունեության կարևոր ուղղություններից մեկը դարձել է այնպիսի համակարգի ստեղծումը, որը «ընդհանուր շուկայում մրցակցությունը կպատնեշի աղավաղումներից» (Հոդված 3):

Պայմանագրի 4-րդ հոդվածով ամրագրված է Համագործակցության խնդիրները լուծող ինստիտուցիոնալ կառուցվածքը (Եվ-

րուպական պառլամենտը, Խորհուրդը, Հանձնաժողովը և Դատարանը): Նույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսվում են վերոնշյալ ինստիտուտներին օժանդակող կառույցներ: Այսպես. Խորհրդին և Հանձնաժողովին օժանդակող կառույց է Տնտեսական և սոցիալական կոմիտեն, իսկ վերահսկողությունն իրականացնում է Աուդիտորների պալատը: Պայմանագրի 155-163 հոդվածները նվիրված են հանձնաժողովի ձևավորման, որոշումների ընդունման կարգին, ինչպես նաև իրավասություններին ու գործառույթներին:

Եվրոպական հանձնաժողովի ձևավորման երկու մոտեցում է գործել՝

1. Հանձնաժողովի անդամների թիվը դարձնել անդամ պետությունների թվին հավասար՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ.

2. Հանձնաժողովի անդամների թիվը սահմանել անդամ-երկրների թվից պակաս [3,168]:

Հանձնաժողովի ձևավորման սկզբնական շրջանում այն բաղկացած էր 13 անդամից (նվազագույնը պետք է լիներ 12, առավելագույնը՝ 24): Մասատրիխտի պայմանագիրը անդամների թիվը սահմանեց 17: Ավստրիայի, Ֆինլանդիայի ու Շվեդիայի անդամակցությունից հետո անդամների թիվը սահմանվեց 20 [3,195-196]: 1965 թվականից մինչև 2005 թվականը Հանձնաժողովը բաղկացած է եղել 20 անդամից, որոնք ընտրվել են անդամ երկրների կառավարությունների կողմից՝ 5 տարի ժամկետով*:

Ներկայումս Եվրահանձնաժողովը բաղկացած է 27 կոմիսարներից (հանձնաժողովի անդամներից), որոնք անդամ երկրներից յուրաքանչյուրի կառավարության կողմից ընդհանուր համաձայնությամբ, 5 տարի ժամկետով նշանակված անձինք են: Կոմիսարներից յուրաքանչյուրը ղեկավարում է Հանձնաժողովի կազմում ստեղծված մեկ գլխավոր տնօրենություն (Ներկայումս մրցակցության գլխավոր տնօրենությունը ղեկավարում է Նիդեռլանդների ներկայացուցիչ Նելի Կրուսը.- Գ.Մ.):

* Սկզբնական տարբերակում Հանձնաժողովի անդամները նշանակվում էին 4 տարի ժամկետով (Հոդված 158):

Կոմիսարներ կարող են նշանակվել միայն Եվրամիության անդամ երկրների քաղաքացիներ: Նրանք իրենց պարտականությունները կատարելիս անկախ են և գործում են համագործակցության ընդհանուր շահերից ելնելով: Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը կոդաբեցնեն ժամկետը լրանալու, մահվան դեպքում, սեփական դիմումի, ինչպես նաև Խորհրդի կամ Հանձնաժողովի միջնորդագրի հիման վրա՝ Եվրադատարանի վճռով (հոդվածներ 159-160): Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովն է սահմանում իր ընթացակարգային կանոնները: Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալները ընտրվում և նշանակվում են Հանձնաժողովի անդամներից:

Հանձնաժողովը կոլեգիալ մարմին է: Այն օժտված է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությամբ և միաժամանակ իրականացնում է գործադիր մարմնի գործառույթներ: Մասնավորապես, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնում է մրցակցության կարգավորման և պաշտպանության խնդիրներ լուծելիս:

Եվրամիության տարածքում մրցակցության պաշտպանությունը կարգավորվում է Հռոմի պայմանագրի 81-90-րդ հոդվածներով (նախկին 85-94 հոդվածներ): 81-րդ հոդվածը վերաբերում է հակամրցակցային համաձայնություններին: Ըստ այդ հոդվածի՝ հակամրցակցային են համարվում այն համաձայնությունները, որոնք ընդհանուր շուկայի տարածքում հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ խախտմանը: Մասնավորապես, այդպիսի համաձայնություններից են՝

- գնման կամ վաճառքի գների կամ առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի ամրագրումը,
- արտադրության, շուկաների, տեխնիկական զարգացման կամ կապիտալ ներդրումների սահմանափակումը կամ վերահսկումը,
- շուկաների կամ մատակարարման աղբյուրների բաժանումը,

- այլ առևտրային գործընկերների հետ հավասարաթեք գործարքների նկատմամբ ոչ միատեսակ պայմանների կիրառումը՝ դրանով նրանց դնելով ոչ շահավետ մրցակցային պայմանների մեջ,

- պարտադրում գործընկերներին այնպիսի լրացուցիչ պարտավորությունների, որոնք իրենց բնույթով կամ առևտրային պրակտիկային համապատասխանությամբ կապված չեն պայմանագրի առարկայի հետ:

Համաձայնության թվարկված տեսակները հակամրցակցային որակելու համար հարկավոր է պարզել մրցակցային միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունը: Իսկ դա պահանջում է մրցակցության բացասական ազդեցության չափանիշի ճշգրտում: Եվրամիության դատարանը որպես այդպիսի չափանիշ ընդունում է մրցակցության զգալի սահմանափակումը, ինչպես նաև երրորդ անձանց վրա զգալի ազդեցությունը: Եվրամիության դատարանը որպես զգալիության չափանիշ նշում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են մենաշնորհների ապրանքաշրջանառության ծավալը, այն ապրանքի բաժինը շուկայում, որի վերաբերյալ համաձայնություն է կայացվել, շուկայական այն կառուցվածքը, որի կազմում մենաշնորհ գործուներություն է իրականացվել [4, 70-71]:

Նշված հոդվածի երրորդ մասով բացառություններ են նախատեսված այն համաձայնությունների համար, որոնք նպաստում են ապրանքների արտադրության կամ տարածման բարելավմանը կամ աջակցում են տեխնիկական առաջընթացին:

Վերոհիշյալ դրույթներից ելնելով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

Նախ՝ Արևմտյան Եվրոպայի երկրների մրցակցության պաշտպանության օրենսդրությունները, որոնք հիմնականում ձևավորվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, միաժամանակ պետք է նպաստեին տվյալ երկրների՝ պատերազմից հետո քայքայված տնտեսության վերականգման խնդրի լուծմանը: Այդ է պատճառը, որ թույլատրելի համաձայնությունների ցանկը մեծ է: Դրանով է պայմանավորված նաև այն,

որ Եվրամիության մրցակցային օրենսդրությանն էլ հատուկ են բացառությունները:

Երկրորդ՝ Պայմանագրի 81-րդ հոդվածը չի տարբերակում համաձայնությունների տեսակները (հորիզոնական կամ ուղղահայաց): Կարգավորման առումով՝ թե՛ հորիզոնական և թե՛ ուղղահայաց համաձայնությունները Եվրամիությունում դիտարկվում են միևնույն հարթության վրա, մինչդեռ, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, մրցակցության տեսանկյունից առավել վտանգավոր են հորիզոնական համաձայնությունները: Հետևաբար՝ տնտեսական համաձայնությունների կարգավորումը տարբերակված մոտեցում է պահանջում:

Երրորդ՝ Հռոմի պայմանագրով նախատեսված հակամրցակցային համաձայնությունը վերաբերում է Եվրամիության տարածքում գտնվող այն ձեռնարկություններին, որոնք պատկանում են տարբեր անդամ-երկրների: Միևնույն երկրի տարածքում գտնվող ձեռնարկությունների միջև եղած համաձայնությունները կարգավորվում են ոչ թե Եվրամիության օրենսդրությամբ, այլ տվյալ երկրի ազգային օրենսդրությամբ: Այն դեպքերում, երբ մի երկրին պատկանող ձեռնարկությունների միջև եղած համաձայնությունը կարող է ազդել Եվրամիության ուրիշ անդամ-երկրներում մրցակցության սահմանափակմանը, ապա այդպիսի համաձայնությունները ևս Եվրահանձնաժողովի կարգավորման տիրույթում է: Եվրահանձնաժողովը Եվրախորհրդի հետ հաստատած կանոնակարգով Եվրահանձնաժողովին համաձայնության մասին նախնական տեղեկացման (06.02.62 N 17/62) ստորին շեմ է սահմանել (տարեկան ընդհանուր ապրանքային շրջանառությունը չգերազանցի 200 մլն եվրոն, և Եվրամիության տարածքում դրանց համատեղ բաժինը չգերազանցի 5 տոկոսը):

Հռոմի պայմանագրով մրցակցության դաշտը կարգավորող երկրորդ ուղղությունը գերիշխող դիրքն է: Պայմանագրի 82-րդ հոդվածն արգելում է Եվրամիության ամբողջ տարածքում կամ դրա զգալի մասում գերիշխող դիրքի չարաշահումները, եթե դրանից կտուժի անդամ-պետությունների միջև կարգավորվող առևտուրը:

Մասնավորապես, այդպիսի չարաշահումներ են՝

- վաճառքի կամ գնման անարդար գների կամ առևտրի այլ անարդար պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը.

- հոգուտ սպառողների՝ արտադրության, շուկաների կամ տեխնիկական զարգացման սահմափակումը.

- ուրիշ առևտրային գործակալների հետ հավասարազոր գործարքների նկատմամբ ոչ միատեսակ պայմանների կիրառումը՝ դրանով իսկ նրանց դնելով մրցակցային ոչ շահավետ պայմանների մեջ.

- գործընկերներին լրացուցիչ՝ առևտրի պրակտիկային անհամապատասխան, պայմանագրի առարկայի հետ առընչություն չունեցող պարտավորությունների պարտադրումը:

Ի տարբերություն տնտեսական համաձայնությունները կարգավորող հոդվածի (Հոդված 81)՝ գերիշխող դիրքի կարգավորումը չի նախատեսում սահմանված կանոններից շեղումներ և բացառություններ: Բաց է մնում նաև գերիշխող դիրքի չափանիշների հարցը: Նման հարցադրումը կանոնակարգվում է դատական պրակտիկայով: Այսպես, «Յունայթիդ բրանդս» ընկերության գործի առթիվ Եվրամիության դատարանը գերիշխող դիրքը բնորոշել է որպես այնպիսի տնտեսական հզորության առկայություն, որը ձեռնարկությունն օգտագործում է արդյունավետ մրցակցության վերացման համար և որը ձեռնարկությանը հնարավորություն է տալիս իր գործերը վարելու մրցակիցներից և սպառողներից անկախ [5, 22]: Այդ մոտեցումից ելնելով ԵՄ դատարանը համարում է, որ սուբյեկտը գերիշխող դիրք չունի 40 տոկոսից ցածր մասնաբաժնի պարագայում:

Հռոմի պայմանագրի 82-րդ հոդվածը շուկայում գերիշխող դիրքն արգելող դրույթներ չի պարունակում: Հետևաբար՝ ԵՄ մրցակցային օրենսդրությամբ արգելվում է ոչ թե գերիշխող դիրք ունենալը (անկախ դրա մեծությունից), այլ այդ դիրքի չարաշահումը:

Եվրամիությունում տնտեսական համակենտրոնացումները կարգավորվում են Հռոմի պայմանագրի 82-րդ հոդվածի առաջին

մասով (միաձուլման այն դեպքի համար, որը կապված է դրա հետևանքով գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունների չարաշահումների հետ): Իսկ 1987 թվականի նոյեմբերի 17-ից ԵՄ դատարանը 82-րդ հոդվածը կիրառեց ֆիրմաների կողմից այլ տնտեսվարողների կանոնադրական կապիտալում ունեցած բաժինների գնման նկատմամբ [6]: Տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ հսկողության ընդհանուր կանոնները սահմանված են Եվրոպական խորհրդի 21.12.1989թ. N 4064/89 կանոնակարգով (1310/97 կանոնակարգով կատարված փոփոխություններ): Դրա համաձայն՝ համակենտրոնացում է համարվում՝

- երկու կամ ավելի անկախ ձեռնարկությունների միաձուլումը կամ միացումը,

- առնվազն մեկ ձեռնարկություն վերահսկող անձի կամ անձանց խմբի, մեկ կամ ավելի ձեռնարկությունների կողմից մեկ կամ ավելի ձեռնարկությունների ձեռք բերումը, ինչպես նաև դրանց որոշումների կայացման նկատմամբ պայմանագրով կամ այլ միջոցներով (ակտիվների կամ արժեթղթերի գնման) ուղղակի կամ անուղղակի հսկողության հաստատումը,

- համատեղ ձեռնարկության ստեղծումը :

ԵՄ Միաձուլումների կանոնակարգի առաջին հոդվածի համաձայն՝ տնտեսական համակենտրոնացումների հայտարարագրման շեմ է սահմանված*.

1. Համակենտրոնացման բոլոր մասնակիցների տարեկան շրջանառությունների ամբողջական գումարը գերազանցում է 5 միլիարդ եվրոն:

2. Առնվազն երկու մասնակիցներից յուրաքանչյուրի տարեկան շրջանառությունը ԵՄ տարածքում գերազանցում է 250 մլն եվրոն, բացառությամբ այն դեպքի, երբ այդ մասնակիցների՝ ԵՄ տարածքում շրջանառության առնվազն 2/3-ը բաժին է ընկնում ԵՄ անդամ մեկ և միևնույն երկրին:

Ռուսաստանի ԳԱ Համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի գիտաշխատող

* Հայտարարագրման շեմը նշված Հոդվածում սահմանված էր էլքյուով: Հետագայում, ԵՄ դրամական միավորը շրջանառության մեջ դրվելուց հետո, այն փոխարինվեց եվրոյով:

Ե. Ուլիբիշևսկի կարծիքով՝ վերոհիշյալ շեմը բարձր է: Այդ պատճառով էլ Եվրահանձնաժողովի հսկողության տակ է ընկնում ԵՄ տարածքում միաձուլումների և միացումների 1/3-ը [7, 126]:

Համակենտրոնացման մասնակիցների տարեկան շրջանառության հաշվարկներում ներառվում են ոչ միայն տվյալ ընկերության, այլև նրա հետ կապված, այսինքն՝ իրեն վերահսկող և իր կողմից վերահսկվող ընկերությունների շրջանառությունները:

Կանոնակարգերով տարբերակված մոտեցում է սահմանված հորիզոնական և ուղղահայաց միաձուլումների նկատմամբ: Հորիզոնական միաձուլումների դեպքում դրանց համատեղ բաժինը ապրանքային շուկայում չպետք է գերազանցի 15%-ը, ուղղահայաց համակենտրոնացման դեպքում՝ 25%-ը:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից համակենտրոնացումների հայտարարագրման և Հանձնաժողովի կողմից դրանց քննարկման ընթացակարգը սահմանված է Խորհրդի 25.07.1990թ. N 2367/90 կանոնակարգով: Հետագայում՝ 2004-ից ի վեր, Եվրոպական խորհրդի ընդունած՝ «Ձեռնարկությունների միջև համակենտրոնացումների հսկողության» թիվ 139 կանոնակարգի և դրա կիրարկումն ապահովող թիվ 802 կանոնակարգի հիման վրա մրցակցության կարգավորման գործառույթը դրված է Եվրահանձնաժողովի Մրցակցության գլխավոր տնօրենության վրա: Վերջինիս իրավասության տակ է գտնվում ԵՄ տնտեսական տարածքում այն համակենտրոնացումների կարգավորումը, որոնցում մասնակից կողմերը ներկայացնում են ԵՄ տարբեր երկրներ: Գործող կարգի համաձայն՝ Մրցակցության գլխավոր տնօրենությունը կարող է իր իրավասության տակ գտնվող գործարքի հսկողությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել ԵՄ անդամ-երկրների համապատասխան մարմինների իրավասությանը: Բացի դրանից՝ համակենտրոնացումների մասնակիցներն իրենց հերթին կարող են հանդես գալ տվյալ գործարքի քննարկումը ԵՄ անդամ-երկրի մրցակցային մարմնի իրավասությանը կամ հակառակ ուղղությամբ փոխանցելու հայտով: Համակենտրոնացումները պատշաճ կարգով գնահատելու համար Եվրոպական հանձնաժողովն իրավասու է պահանջելու

անհրաժեշտ տեղեկատվություն, Եվրահամայնքի տարածքում ստուգումներ կատարելու, ինչպես նաև հետաքննություն անցկացնելու (հարցաքննելու օգտակար տեղեկություն ունեցող բոլոր անձանց և գրանցելու նրանց հայտարարությունները): Հանձնաժողովի կողմից լիազորված պաշտոնյաներն ստուգումն անցկացնելու համար ունեն հետևյալ լիազորությունները.

- մուտք գործել ձեռնարկության կամ ձեռնարկության ընկերակցության ցանկացած տարածք,

- ուսումնասիրել գործունեությանը վերաբերող մատյաններն ու այլ գրանցումները, անկախ այն բանից, թե ինչ կերպ են դրանք պահվում,

- վերցնել կամ որևէ կերպ ստանալ պատճեններ կամ քաղվածքներ այդ մատյաններից և գրանցումներից,

- ժամանակավոր կամ ստուգման համար անհրաժեշտ ժամանակով արգելքի տակ դնել համակենտրոնացմանը մասնակից տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը վերաբերող ցանկացած տարածք, մատյաններ կամ գրանցումներ,

